ՍՍՌՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
МИНИСТЕРСТВО ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ СССР
АРМЯНСКИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ИНСТИТУТ

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ

№ 7

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

ԵՐԵՎԱՆ 1952 ЕРЕВАН

ՍՍՌՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
МИНИСТЕРСТВО ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ СССР
АРМЯНСКИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ИНСТИТУТ

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ

№ 7



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

ԵՐԵՎԱՆ 1952 ЕРЕВАН



ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
АРМЯНСКИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ИНСТИТУТ

Գիտ. աշխատութ. ժողովածու — № 7, 1952 — Сборник научных трудов

Գ. Խ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ (ՂԱՓԱՆ, ՄԵՂՐԻ) ԴԱՇՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հաղորդում առաջին

ԴԱՇՏԱ-ՄՈԼԱԽՈՏԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ ԴԵՄ

Հայաստանի հարավ-արևելյան շրջանների գյուղատնտեսությունն ընդհանրապես և դաշտավարությունը մասնավորապես համարյա բոլորովին ուսումնասիրված չեն: Չեն պարզված այդ շրջանների հարուստ բնական պայմանների առանձնահատկությունները, նրանց ճիշտ օգտագործելու և բարձր ու կայուն բերք ստանալու լայն հնարավորությունները: Մինչև այժմ չկան տեսականորեն հիմնավորված և գործնականորեն ստուգված գիտական տվյալներ՝ այդ շրջանների գյուղատնտեսական կարևոր ճյուղերի ցածր արտադրողականության պատճառների և բերքատվության բարձրացման միջոցառումների մասին:

Մինչդեռ այդ շրջանների հարուստ բնական պայմաններում ագրոնոմիական միջոցառումների ճիշտ սիստեմ կիրառելու դեպքում միանգամայն հնարավոր է մեծ չափով զարգացնել գյուղատնտեսության այնպիսի կարևոր ճյուղերը, ինչպիսիք են՝ դաշտավարությունը, այգեգործությունը, բանջարաբուծությունը, պտղաբուծությունը, անասնաբուծությունը: Այդ շրջաններում մեծ հնարավորություններ կան զարգացնելու նաև գյուղատնտեսության օժանդակ ճյուղերը՝ շերամապահությունը, մեղվաբուծությունը և այլն:

Գոյություն ունեցող այդ հարուստ հնարավորությունները հետազոտելու և բացահայտելու, գյուղատնտեսության առանձին ճյուղերի համար ագրոմիջոցառումների ճիշտ սիստեմներ կազմելու և նրանց զարգացման մեջ անհրաժեշտ հարաբերակցություն ստեղծելու, այդ շրջաններում եղած բոլոր պոտենցիալ հնարավորությունները լայնորեն օգտագործելու և գյուղատնտեսական արտադրության վերելքն ապահովելու համար Գյուղատնտեսական ինստիտուտը 1947—1948 թվականների ընթացքում կազմակերպեց Հայաստանի հարավ-արևելյան վեց շրջանների (Միկոյան, Ազիզբեկով, Սիսիան, Գորիս, Ղափան և Մեղրի) գյուղատնտեսության կոմպլեքսային էքսպեդիցիոն ուսումնասիրություն:

ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ղափանի և Մեղրու շրջանները գրավում են համեմատաբար ոչ մեծ տարածություն, զբաղեցնում են Հայկական ՍՍՌ-ի ծայրագույն հարավ-արևելյան մասը և շրջապատված են բարձրաբերձ լեռներով ու լեռնաշղթա-

ներով՝ արևմուտքից Զանգեզուրի լեռնաշղթայով, հյուսիսից՝ Բարգուշատի լեռնաշղթայով, հարավից՝ իրանական լեռներով, իսկ արևելքից սահմանակից են Ադրբեջանական ՍՍՌ-ին։ Հարավից նեղ հովտով հոսում է Արաքս գետը։

Մեղրու շրջանը բաժանվում է Ղափանի շրջանից Մեղրի-Գյունեյի լեռնաշղթայով։

Այս շրջանների ռելեֆը խիստ կտրտված լեռնային է, կան մեծ քանակությամբ դժվարամատչելի թեքություններ, խոր ձորեր ու ձորակներ։

Ոռոգման հնարավորություններն այդ շրջաններում մեծ չեն։ Ոռոգման նպատակով օգտագործվող աղբյուրներն ու գետակները մեծ մասամբ ամառը ցամաքում են և միայն գարնանն են ջրառատ լինում։ Ջրային այս փոքր հնարավորությունները, հատկապես Մեղրու շրջանում, բացատրվում են բարձր լեռների, մերկ ժայռերի, Իրանից փչող չոր և տաք քամիների առկայությամբ։

Կլիման։ Կլիմայական պայմանների առանձնահատկությունների տեսակետից Ղափանի շրջանը կարելի է բաժանել երեք գոտու՝ նախալեռնային, որի բարձրությունը տատանվում է 700—1700 մետրի միջև, լեռնային, որի բարձրությունն է 1700—2350 մետր և բարձր լեռնային, որն ընդգրկում է 2350 մետրից ավելի բարձր մասերը։

Նախալեռնային գոտու արևելյան մասը, որը առավելապես ցածրադիր է, աչքի է ընկնում իր համեմատաբար չոր մերձարևադարձային կլիմայով։

Տարեկան տեղումների մոտ 30—40 %-ը լինում է գարնանային ամիսներին։ Այստեղ տարեկան միջին ջերմությունը կազմում է 11—12° C։

Լեռնային գոտու կլիման բարեխառն է՝ ձմեռը համեմատաբար մեղմ, ամառը՝ զով։ Տարեկան տեղումների քանակը մոտ 100 մմ ավելի է, քան նախալեռնային գոտում։ Կլիմայի վրա մեղմացնող ազդեցություն թողնում են անտառները։

Բարձր լեռնային գոտին ունի ավելի սառը մերձալպիական և ալպիական կլիմա։ Ձմեռը ցուրտ է և երկարատև։ Մթնոլորտային տեղումների տարեկան միջինը 150—200 մմ ավելի է, քան նախալեռնային գոտում։

Մեղրու շրջանի կլիման ավելի բազմազան է, ավելի խայտաբղետ։ Շնորհիվ այն հանգամանքի, որ նա շրջապատված է տարբեր լեռնաշղթաներով, այստեղ ուժեղ քամիներ քիչ են լինում և այն էլ Արաքս գետի նեղ հովտում։ Այդ շրջանը մենք բաժանում ենք չորս գոտիների՝ ցածրադիր, նախալեռնային, լեռնային և բարձր լեռնային։

Առաջին գոտում կլիման չոր մերձարևադարձային է, ամառը երկարատև, չոր, ձմեռը տաք և քիչ ձյունածածկոցով։ Այս գոտում, ինչպես և ամբողջ շրջանում, զգացվում է իրանական տաք անապատային քամիների ազդեցությունը։

Այս գոտու քամիներից առավել պաշտպանված ցածրադիր մասերում (550—600 մ բարձրությամբ) կլիման ավելի տաք է, որը հնարավորություն է տալիս մշակելու նուռ, թուզ, նուշ և այլ մերձարևադարձային կուլտուրաներ։ Սակայն լինում են տարիներ, երբ այդ կուլտուրաները գոտու որոշ մասերում մեծ չափով տուժում են ձմռան ցրտերից։

Այս գոտում ամառը լինում է երկարատև երաշտ, օդի հարաբերական խոնավությունը ենթարկվում է խիստ տատանումների։

Այստեղ գարունը սկսվում է վաղ՝ մարտի սկզբում։ Ամենաշոգ ամիսներն են հուլիսը և օգոստոսը, ամենացուրտը՝ հունվարը։ Աշունը երկարատև է և տաք։ Այստեղ մթնոլորտային տեղումները շատ քիչ են։ Վեգետացիոն շրջանը տևում է մինչև 8 ամիս։ Առաջին աշնանային ցրտահարությունները լինում են նոյեմբերի երրորդ տասնօրյակից սկսած, իսկ գարնանային վերջին ցրտահարությունները՝ մինչև մարտի առաջին կեսը։

Նախալեռնային գոտու բարձրությունը տատանվում է 600—1200 մետրի միջև։ Այս գոտին ևս մթնոլորտային տեղումներով հարուստ չէ, այստեղ ևս օդի հարաբերական խոնավությունը ամառվա շոգ ամիսներին խիստ ցածր է։

Լեռնային գոտում կլիման բարեխառն է, այստեղ գարնանային դաշտային աշխատանքները մոտ 1,5 ամիս ավելի ուշ են սկսվում, քան ցածրադիր գոտում։

Այս գոտու բարձրությունը տատանվում է 1200—2200 մետրի միջև։ Այստեղ կլիմայի վրա ուժեղ ազդեցություն թողնում են անտառները, որոնք զգալիորեն մեղմացնում են այն, մթնոլորտային տեղումները համեմատաբար շատ են։

Շրջանում 2200 մետրից ավելի բարձր մասերը կազմում են բարձր լեռնային գոտին։ Այս գոտու կլիման բավականաչափ մոտ է Ղափանի շրջանի բարձր լեռնային գոտու կլիմային։

Հողային ծածկոցը։ Ղափանի և Մեղրու շրջանների հարավային մասերում առաջացել են գորշ և բաց գորշ, խիստ կմախքային, քարքարոտ, էրոզիայի ենթարկված հողեր։ Չոր կոնտինենտալ կլիման, ռելեֆի առանձնահատկությունները, ինչպես նաև խիտ բուսականության բացակայությունը պայմանավորել են այն, որ բաց գորշ հողերը զրկված են նուրբ մասնիկներից, որոնք լվացվել և տարվել են ցածրունքները։ Լվացման և հողատարման պրոցեսներն առանձնապես ուժեղ արտահայտված են Մեղրու լեռնաշղթայի հարավային՝ դեպի Արաքս իջնող լանջերում։ Այս հողերն ունեն թույլ հզորություն, օրգանական նյութերից աղքատ են։

Այստեղ կան նաև մոխրա-գորշ հողեր, որոնք անապատային մոխրագույն և կիսաանապատային գորշ հողերի միջին տեղն են բռնում։ Ղափանի և Մեղրու շրջանների ռելեֆի համեմատաբար հարթ մասերում առաջացել են գորշ հողեր։

Կուլտուր-ոռոգելի հողերը զբաղեցնում են արհեստական դարավանդները և աչքի են ընկնում իրենց բարձր բերրիությամբ։ Հենց այդպիսի հողերում էլ ջրովի պայմաններում աճեցվում են խաղողի վազերը, պտղատու ծառերը և այլ թանկարժեք կուլտուրաներ։

Լեռնային տիպիկ տափաստանների գոտում առաջացել են հետևյալ տիպի հողերը.

1. Բաց-շագանակագույն, էրոզիայի ենթարկված հողեր։
2. Շագանակագույն կարբոնատային հողեր։
3. Շագանակագույն, խիստ կմախքային, քարքարոտ, էրոզիայի ենթարկված հողեր, որոնք գրավում են ձորերի և ձորակների թեք լանջերը, ձորակների արտաբերումները և քարափները։
4. Շագանակագույն սևահողեր՝ հրաբխային և բերվածքային տեռասների ու դելյուվիալ բերվածքների վրա։ Այս հողերի բարձրությունը տա-

տանվում է 2000—2200 մետրի միջև: Այս գոտում կան ոչ մեծ, ակումուլյատիվ ցածրունքներ, որտեղ առաջացել են հզոր շագանակագույն հողեր, ինչպես նաև շագանակագույն սևահողեր: Այս հողերը հացահատիկային կուլտուրաների մշակության համար մեծ արժեք են ներկայացնում: Այս գոտու վեգետացիոն շրջանի տևողությունը կարճ է, տարվա միջին ջերմությունն է 5—8° C, մթնոլորտային տեղումների քանակը տատանվում է 400—650 մմ միջև:

Այս գոտու հարավային չոր մասում կան չոր տափաստաններ՝ իրենց բաց շագանակագույն և նույնիսկ մուգ շագանակագույն հողերով, իսկ հյուսիսային մասերում կան շագանակագույն սևահողեր:

Ղափանի և Մեղրու շրջանների լեռնաշագանակագույն հողերը աչքի են ընկնում իրենց հզորությամբ, կարբոնատությամբ և պարզ արտահայտված ստրուկտուրայնությամբ:

Հումուսի պարունակությունը տատանվում է 2,5—3,0 %-ի միջև:

Այդ երկու շրջաններում կան նաև լեռնա-անտառային հողեր, որոնց տարածման գոտին հասնում է մինչև 2400 մ բարձրության: Այստեղ կան հետևյալ տիպի հողեր.

1. Գորշ-մոխրագույն լեռնա-անտառային:
2. Մուգ-գույնի լեռնա-անտառային: Այս հողերի գենետիկ հորիզոններն ավելի մեծ են, պարունակում են ավելի շատ հումուս և ունեն ծանր մեխանիկական կազմ:
3. Հումուսա-կարբոնատային, խիստ կմախքային: Սրանք ունեն փոքր հզորություն և պարզ արտահայտված կնձկային ստրուկտուրա: Այս հողերից էլ ավելի բարձր մասերում, բարձր լեռնային գոտում առաջացել են.

1. Լեռնա-մարգագետնային մուգ գույնի հողեր հրաբխային տեսակների, գելյուվիալ բերվածքների վրա և
2. Լեռնա-ճմա-մարգագետնային, սակավազոր և միջին հզորությամբ, բաց դարչնագույն հողեր:

Այս գոտում դաշտային կուլտուրաներ չեն մշակվում:

ԴԱՇՏԱՄՈԼԱԽՈՏԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեր և այլ հետազոտողների կողմից Ղափանի և Մեղրու շրջաններում հայտնաբերած մոլախոտերի տեսակների թիվը խիստ մեծ է, սակայն այդ բազմաթիվ տեսակների փոքր մասն է միայն շատ տարածված, որոնք պատճառում են մեծ վնաս և դժվար ոչնչացվող մոլախոտերի թիվն են պատկանում:

Ստորև, № 1 աղյուսակում բերում ենք Ղափանի և Մեղրու շրջանների ցանքերում և այգիներում տարածված մոլախոտերի մի մասի ցուցակը միայն: Այդ մոլախոտերը գտնվել են ինչպես ջրովի, այնպես էլ անջրդի պայմաններում:

Ցուցակում բերված տվյալներից դժվար չէ տեսնել, որ Մեղրու շրջանի ցանքերում մոլախոտերի տեսակներն զգալիորեն ավելի շատ են, քան Ղափանի շրջանի ցանքերում: Տարբերությունն առանձնապես մեծ է այգիներում հայտնաբերված մոլախոտերի տեսակների թվի միջև: Մեղրու

Աղյուսակ 1

ՑՈՒՑԱԿ

Ղափանի և Մեղրու շրջանների ցանքերում և այգիներում հայտնաբերված մոլախոտերի

Տեսակը	Որ կուլտուրաների ցանքերում է հայտնաբերվել												Մոլախոտերի հայկական անունները
	Ղափանի շրջանում						Մեղրու շրջանում						
	Աշնանացան հացահատիկն.	Գարնանացան հացահատիկն.	Շարքահերկ կուլտուրաների	Առվույտի, կորնգանի	Ցելահողամասերում	Խաղողի և պտղատու այգին.	Աշնանացան հացահատիկն.	Գարնանացան հացահատիկն.	Շարքահերկ կուլտուրան.	Առվույտի, կորնգանի	Ցելահողամասերում	Խաղողի և պտղատու այգին.	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Acroptilon picris	—	+	+	—	—	—	+	+	+	—	—	—	Դառնախոտ, մոխրագաղտող
Acanthophyllum mucronatum	—	—	—	—	—	—	—	+	—	—	—	—	Փշատերևուկ
Adonis aestivalis	+	+	—	—	—	+	+	+	—	—	+	+	Կուժկոտրուկ
Aethusa Cynapium	—	+	—	—	—	+	+	—	+	—	—	+	Շնկարոս
Agropyrum repens	+	+	—	—		+	+	—	—	+	+	+	Սեզ, չայիր
Alectorolophus major	+	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	Հավակատար, խշխշան
Alhagi pseudalhagi	+	—	—	—	—	+	+	+	—	—	—	+	Ուղտափուշ
Althaea cannabina	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	+	Տուղտ
Amarantus retroflexus	—	+	+	—	—	—	+	+	+	—	—	—	Հավակատար
„ albus	—	+	+	—	—	+	—	—	—	—	—	+	»
Anchusa italica	—	+	—	—	—	—	+	+	+	—	—	+	Կավաժիպակ
Artemisia Absinthium	+	—	—	—	—	+	+	+	—	—	—	—	Օշինդր, բարձմենակ
„ vulgaris	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	+	» »
„ orientalis	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	—	» »
Asperula odorata	+	—	—	—	—	—	—	+	—	—	—	—	Գետնաստղ
Astragalus glycyphylloides	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	Գազ
„ araxinus	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	»
Astrodaucus orientalis	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	Աստղադազար
Atriplex tatarica	+	+	—	—	—	—	—	+	—	—	+	+	Թալ, թաղթ
Avena fatua	+	+	—	—	+	—	+	+	—	—	+	—	Խրփուկ, պոչուկ, պառթուղ
Avena Ludoviciana	+	+	—	—	—	—	+	—	—	—	+	—	» » »
Ballota nigra	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	Պրասխ
Brachypodium silvaticum	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	Կարճոտիկ

Ծանոթություն.—Չորրորդ և տասներորդ սյունակներում դետեղված են բանջար-բոստանային կուլտուրաների, ճակնդեղի, կարտոֆիլի, ծխախոտի, լոբու ցանքերում հայտնաբերած մոլախոտերը:

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Bromus inermis	+	+	—	+	—	+	+	—	—	—	—	—	Ցորնուկ
Bromus tectorum	+	+	—	—	—	—	+	—	—	+	—	+	»
Bromus Danthoniae	—	—	—	—	—	+	+	+	—	+	—	+	»
Capsella bursa pastoris	+	+	—	—	—	—	+	+	—	—	+	—	Հովվամաղախ, ծաղաչար
Calystegia sepium	—	—	—	—	—	+	+	—	—	—	—	+	Տիկատատուկ
Campanula rapunculoides	—	+	—	—	—	—	—	+	—	—	—	—	Զանգակիկ
Carum carvi	—	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	Քիմոն
Carduus crispus	—	+	—	—	—	—	+	—	—	—	—	—	Կառ
„ hamulosus	+	+	—	—	—	—	+	—	—	—	+	—	»
Caucalis daucoides	+	—	—	—	—	—	+	+	—	—	—	—	Բող
Centaurea Fischeri	+	+	—	+	—	—	+	—	—	—	—	—	Տերեփուկ
„ solstitialis	+	—	—	—	—	—	—	+	—	—	+	—	»
Cephalaria syriaca	+	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	Ղանթաքար
Chaerophyllum bulbosum	+	—	—	—	—	—	—	+	—	—	—	—	Շուշանբանջար
Chenopodium album	+	—	+	—	—	+	+	+	+	—	—	+	Թելուկ, սաղախոտ
Chelidonium majus	—	+	+	—	—	—	—	+	+	—	—	+	Ծիծեռնախ., ծիծեռնադեղ
Chondrilla acantholepis	—	—	—	—	—	+	—	+	—	—	—	+	Խիժաճարճատուկ
Cichorium intibus	—	+	+	—	—	—	+	+	+	—	+	+	Ճարճատուկ, եղերդ
Cirsium incanum	+	+	—	—	—	—	+	+	—	—	+	+	Տատասկ, գեղավեր
„ setosum	—	+	—	—	+	—	—	—	—	—	—	—	» »
„ congestum	—	+	—	+	—	—	—	—	—	—	—	—	» »
Cynanchum acutum	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	+	Թունաթափ
Cynodon Dactylon	+	+	—	—	—	+	+	—	+		+	+	Արմատնակ
Convolvulus arvensis	+	+	+	—	—	+	+	+	+	—	+	+	Պատատուկ
Coronilla varia	+	—	+	—	—	—	+	+	+	—	—	+	Քարաովույտ
Cousinia orientalis	—	+	—	—	—	—	—	—	+	—	—	—	Կուզինիա
Cuscuta monogyna	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	+	Գաղձ, գայլուկ
„ lupuliformis	—	—	—	—	—	+	—	—	—	+	—	+	» »
„ europaea	—	—	+	—	—	+	—	—	+	+	—	+	» »
„ cupulata	—	—	—	+	—	—	—	—	+	+	—	+	» »
„ Epithymum	—	—	+	+	—	—	—	—	+	+	—	—	» »
Delphinium divaricatum	+	—	—	—	—	—	+	+	—	—	—	—	Դելֆին, կարաակոտրուկ
„ orientale	—	+	—	—	—	—	—	+	—	—	—	—	» »
„ hybridum	—	+	—	—	—	—	+	+	—	+	—	—	» »
Digitaria ciliaris	—	+	—	—	—	—	+	+	—	—	—	—	Մատնախոտ
Echinochloa crus galli	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	Հավակորեկ, սուլուֆ
Echium altissima	—	—	—	—	—	+	—	—	+	+	—	+	Իժախոտ
Equisetum arvense	—	—	—	—	—	—	—	—	+	—	+	—	Ձիաձեթ
„ ramosissimum	—	—	+	—	—	—	—	—	+	—	—	—	»

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Erigeron canadense	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	+	Ձորուկ
Epilobium hirsutum	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	+	Ալուղան
Euphorbia helioscopia	—	—	+	—	—	+	—	—	+	—	—	+	Իշակաթնուկ
„ virgata	+	—	—	—	+	—	+	—	+	—	—	+	»
„ iberica	+	+	—	+	—	+	+	+	—	—	—	—	»
„ Seguierana	—	—	+	—	+	—	—	—	+	—	+	+	»
Falcaria vulgaris	+	+	—	+	—	+	+	+	—	+	—	+	Սիսեխ
Filipendula hexapetala	+	+	—	—	—	—	—	+	—	—	—	—	Փրփրուկ
Fumaria Schleicheri	+	+	—	—	—	—	+	+	—	—	—	—	Ծխաբույս
„ officinalis	—	+	—	—	+	—	+	—	—	—	+	—	»
Galium tricorne	+	—	—	—	—	—	+	+	—	—	—	—	Մակարդախոտ
„ Vailantii	+	+	—	—	—	—	+	+	—	—	—	—	»
Gypsophila elegans	+	+	—	—	—	—	+	+	—	—	—	+	Ցմախ
„ bicolor	—	+	—	—	+	—	+	—	+	—	—	—	»
Glycyrrhiza hirsuta	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	+	Մատուտակ, քաղցր բիան
Goebelia alopecuroides	—	—	+	—	—	+	—	—	—	—	—	+	Դառը բիան
Hemerocallis fulva	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	Լեռնաշուշան
Humulus lupulus	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	Գայլուկ
Hypericum perforatum	+	+	—	—	—	—	+	+	—	—	—	—	Արյունխոտ, պտղղակ
Kochia prostrata	—	—	—	—	—	—	—	+	—	—	+	+	Կոխիա
Lactuca scariola	+	—	—	—	+	+	+	+	+	—	+	+	Հազար, մատոլ, եղեշնակ
Lallemantia peltata	+	+	—	—	—	—	+	+	—	—	—	—	Ղաշխա կոտավատ
Lamium album	—	—	+	—	—	—	—	—	+	—	+	+	Խուլեղինջ
Lapsana intermedia	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	Խարբրուկ, խարշուկ
Lathyrus aphaca	—	+	—	—	—	—	+	+	—	—	—	—	Տափոլոռ
„ tuberosus	+	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	»
Lythrum salicaria	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	Արենախոտ
Lolium persicum	—	+	—	—	—	—	+	+	—	—	—	—	Որոմ
„ rigidum	—	—	—	—	—	—	—	—	+	—	—	+	»
Malva silvestris	—	—	+	—	—	—	—	—	—	—	+	+	Փիփերթ, մոլոշ
Melilotus officinalis	+	+	+	—	—	+	+	+	+	—	—	+	Իշառվույտ
„ dentatus	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	»
„ albus	—	—	—	+	—	—	—	—	—	+	—	+	»
Medicago lupulina	—	—	—	—	+	+	—	—	—	—	—	+	Առվույտ
Mentha longifolia	—	—	+	—	—	—	—	—	—	—	—	+	Դաղձ, անանուխ
„ piperita	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	+	» »
Myagrum perfoliatum	+	+	—	—	—	—	—	+	—	—	—	—	Մկնառ
Nepeta micrantha	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	+	Կատվաղաղձ
Onopordon Acanthium	+	—	—	—	—	+	—	+	—	+	—	+	Կաղշնակ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Orobanche ramosa	+	—	—	+	—	—	—	—	—	+	—	+	Ծրագախոտ
Paronichia kurdica	—	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	Քըմի
Panicum glaucum	—	—	—	—	—	—	—	—	+	+	—	—	Կորեկ
Pennisetum orientale	+	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	Պենիզետ
Phleum phleoides	+	—	—	—	—	—	—	—	—	+	—	+	Սիզախոտ, տիմոֆեևկա
Phragmites communis	—	—	+	+	—	—	—	—	+	—	—	+	Եղեգ, շամբի
Pisum humile	—	+	—	—	—	—	+	+	—	—	—	—	Ոլոռ
Plumbago europaea	—	—	—	—	+	+	—	—	—	+	—	+	Արճճախոտ
Plantago ramosa	—	—	—	—	—	+	—	—	+	—	—	—	Եզան լեզու, ջղախոտ
„ lanceolata	+	+	—	—	—	+	—	—	+	—	—	+	» » »
Polygonum Convolvulus	+	+	+	—	—	+	+	+	+	—	+	—	Մատիտեղ
„ aviculare	+	+	—	—	—	—	+	+	—	—	—	+	»
„ hydropiper	—	—	+	—	+	—	—	+	—	+	+	—	»
Potentilla (տարբեր)	—	+	+	—	—	+	+	+	+	—	—	+	Մատնունի (տարբեր)
Prosopis stephaniana	—	—	—	—	—	—	—	—	—	+	—	+	
Ranunculus sceleratus	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	Գորտնուկ
„ repens	—	—	—	—	—	+	—	—	+	—	—	—	»
Rumex (տարբեր)	+	+	+	—	+	+	+	+	+	—	+	+	Ավելուկ, թրթնջուկ
Salvia verticillata	+	+	+	—	—	+	+	+	—	+	—	—	Եղեսպակ
Salsola verrucosa	—	—	—	—	+	—	—	—	—	—	—	—	Օշան, շորան, աղաբույս
„ macera	—	—	—	—	+	—	—	—	—	—	—	+	» » »
Scrophularia alata	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	Խլածաղիկ
Setaria glauca	+	+	+	+	—	+	—	+	+	+	+	+	Խոզանուկ
„ viridis	—	+	+	—	—	—	—	—	+	—	—	—	»
Silene Conoidea	—	—	—	—	+	+	—	—	+	—	—	+	Ծվծվուկ
Sorghum halepensis	+	—	+	—	—	+	+	+	+	+	—	+	Մոլասորգո
Solanum nigrum	—	—	+	—	—	—	—	—	+	—	+	—	Մորմ
„ persicum	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	»
Stachis iberica	—	—	+	—	—	—	—	—	—	—	—	+	Աբեղախոտ
Taraxacum officinale	—	+	+	—	+	—	—	+	+	+	+	+	Խատուտիկ
Thalictrum minus	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	+	Քնձմնձուկ
Trifolium repens	—	—	+	—	—	+	—	+	+	+	—	+	Երեքնուկ
„ neglectum	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	»
Tragopogon sp.	+	—	—	—	—	—	+	—	+	—	—	—	Սինձ
Vaccaria grandiflora	+	+	—	—	—	—	+	+	—	—	—	—	Կովախոտ
Valerianella oxyrrhyncha	—	—	—	—	—	—	—	—	—	+	—	—	Փոքր ագռավդրուկ
Verbascum thapsus	—	+	—	—	—	—	—	+	—	—	—	—	Խնդատ
Vicia (տարբեր)	+	+	+	—	+	—	+	+	—	+	+	+	Վիկ (տարբեր)
Ընդամենը տեսակների թիվը	51	55	32	11	16	45	58	57	41	25	28	80	

շրջանի այգիներում տարածված մոլախոտերի տեսակների թիվը (80) համարյա երկու անգամ ավելի է, քան Ղափանի շրջանի այգիներում (45)։

Մեղրու շրջանի այլ կուլտուրաների ցանքերում ևս մոլախոտերի տեսակների թիվը ավելի մեծ է, քան Ղափանի շրջանի ցանքերում։ Սակայն սա դեռ չի նշանակում, թե Ղափանի շրջանում ցանքերն ու այգիները մոլախոտերից ավելի մաքուր են, քան Մեղրու շրջանում։ Մեղրու շրջանում մոլախոտերի տեսակների թիվը ավելի մեծ է, բայց նրանց քանակը մի միավոր տարածության վրա անհամեմատ ավելի քիչ է, քան Ղափանի շրջանի ցանքերում և այգիներում։ Այսպես, եթե Ղափանի շրջանի այգիներում տարածված մոլախոտերի քանակը 1 մ² տարածության վրա ընդունենք 100, ապա Մեղրու շրջանի այգիներում այդ թիվը կկազմի ընդամենը 74,5։ Մոտավորապես նույնպիսի հարաբերություն գոյություն ունի նաև այլ կուլտուրաներում հայտնաբերված մոլախոտերի ընդհանուր քանակի միջև։

Ընդհանուր առմամբ բոլոր կուլտուրաների ցանքերում մոլախոտերի տեսակների թիվը և վարակվածության չափը խիստ մեծ է։ Դա բացատրվում է նրանով, որ համարյա ամենուրեք, առանձնապես Ղափանի շրջանում, ագրոտեխնիկական ձեռնարկումները շատ ցածր մակարդակի վրա են գտնվում, իսկ աշխատանքների ամբողջական սիստեմ կիրառելու մասին խոսք անգամ չկա։ Բացառություն են կազմում Մեղրու այգիները, որոնց խնամքը դրված է հարկ եղած բարձրության վրա։

Ամենից քիչ վարակված են շարքահերկ կուլտուրաների, բազմամյա խոտաբույսերի ցանքերը և ցելահողամասերը, ամենից շատ՝ աշնանացան ու գարնանացան հացահատիկների ցանքերը և այգիները։

Հանրածանոթ երևույթ է, որ աշնանացան հացահատիկների ցանքերում մոլախոտերը համեմատաբար ավելի ուժեղ են ճնշվում և նրանց քանակն այդ ցանքերում ավելի պակաս պետք է լինեը, քան գարնանացան հացահատիկների ցանքերում, սակայն պատկերն այլ է։ Դա բացատրվում է նրանով, որ ցանքերի բարձրորակ խնամքի բացակայությունը փաստորեն վերացրել է աշնանացանների այդ առավելությունը։ Եթե սրան ավելացնենք նաև այն, որ գարնանացանների համար հողի նախացանքային աշխատանքները համեմատաբար ուշ են կատարվում, երբ մոլախոտերի զգալի մասը արդեն ծլած է լինում և ոչնչացվում է այդ աշխատանքները կատարելու ժամանակ, ապա պարզ կլինի, թե ինչու գարնանացան հացահատիկների ցանքերում մոլախոտերի քանակը համարյա նույնքան է, ինչքան աշնանացանների ցանքերում։

Ցանքերում և այգիներում ամենից շատ տարածված մոլախոտերի թվին պատկանում են՝ Acroptilon picris, Adonis, aestivalis, Aethusa Cynapium, Agropyrum repens, Alhagi pseudalhagi, Amarantus (տարբեր), Anchusa italica, Avena (տարբեր տեսակներ), Bromus (տարբեր), Chenopodium album, Cichorium intibus, Cirsium (տարբեր), Cynodon Dactylon, Convolvulus arvensis, Cuscuta (տարբեր), Euphorbia (տարբեր), Falcaria vulgaris, Fumaria (տարբեր), Galium (տարբեր), Lactuca scariola, Melilotus (տարբեր), Onopordon Acanthium, Plantago (տարբեր), Polygonum (տարբեր), Ranunculus (տարբեր), Rumex (տարբեր), Salvia verticillata, Setaria (տարբեր), Sorghum halepensis, Taraxacum officinale, Trifolium (տարբեր), Vaccaria grandiflora, Vicia (տարբեր)։

Ցուցակում թվարկված մոլախոտերից ամենից մեծ վնաս պատճառող և միաժամանակ դժվար վերացվող են՝ Acroptilon picris, Agropyrum repens, Avena fatua, Avena Ludoviciana, Cirsium *(տարբեր տեսակները)*, Cynodon Dactylon, Convolvulus arvensis, Cuscuta *(տարբեր տեսակները)*, Alhagi pseudalhagi, Goebelia alopecuroides, Sorghum halepensis *և ուրիշն.:*

Առավելապես հացահատիկային կուլտուրաների ցանքերի մոլախոտեր են՝ Adonis aestivalis, Amarantus retroflexus, Anchusa italica, Atriplex tatarica, Avena fatua *և* Avena Ludoviciana, Bromus *(տարբեր)*, Capsella bursa pastoris, Carduus *(տարբեր)*, Caucalis daucoides, Centaurea *(տարբեր)*, Cephalaria syriaca, Chenopodium album, Cichorium intibus, Cirsium *(տարբեր)*, Cynodon Dactylon, Convolvulus arvensis, Coronilla varia, Delfinium *(տարբեր)*, Falcaria vulgaris, Fumaria *(տարբեր)*, Galium *(տարբեր)*, Gypsophila *(տարբեր)*, Hypericum perforatum, Lactuca scariola, Lallemantia peltata, Lolium persicum, Melilotus officinalis, Onopordon Acanthium, Plantago lanceolata, Polygonum *(տարբեր)*, Rumex *(տարբեր)*, Salvia verticillata, Setaria *(տարբեր)*, Vaccaria grandiflora, Vicia *(տարբեր)*:

Շարքահերկ կուլտուրաների ցանքերում տարածված են գլխավորապես հետևյալ մոլախոտերը՝ Acroptilon picris, Amarantus retroflexus, Chenopodium album, Chelidonium majus, Cichorium intibus, Cynodon Dactylon, Convolvulus arvensis, Cuscuta *(տարբեր)*, Equisetum *(տարբեր)*, Euphorbia *(տարբեր)*, Lactuca scariola, Lamium album, Melilotus officinalis, Phragmites communis, Polygonum *(տարբեր)*, Rumex *(տարբեր)*, Setaria *(տարբեր)*, Sorghum halepensis, Solanum nigrum, Taraxacum officinale, Trifolium repens:

Բազմամյա խոտաբույսերի ցանքերի գլխավոր մոլախոտերն են՝ Bromus *(տարբեր)*, Cuscuta *(տարբեր)*, Falcaria vulgaris, Melilotus albus, Orobanche ramosa, Onopordon Acanthium, Setaria glauca, Sorghum halepensis, Taraxacum officinale, Trifolium *(տարբեր)*:

Ցելահողամասերում տարածված մոլախոտերի տեսակների թիվը համեմատաբար պակաս է և համարյա այնքան է, ինչքան բազմամյա խոտաբույսերի ցանքերում: Ցելահողամասերում հաճախ հանդիպող մոլախոտերն են՝ Adonis aestivalis, Agropyrum repens, Artemisia orientalis, Atriplex tatarica, Avena *(տարբեր)*, Carduus hamulosus, Centaurea solstitialis, Cichorium intibus, Cirsium setosum, Cynodon Dactylon, Convolvulus arvensis, Euphorbia *(տարբեր)*. Fumaria officinalis, Lactuca scariola, Medicago lupulina, Polygonum hydropiper, Rumex *(տարբեր)*, Salsola *(տարբեր)*, Setaria glauca, Solanum nigrum, Taraxacum officinale.

Ղափանի և Մեղրու շրջաններում ամենից ուժեղ աղբոտված են այգիները և առանձնապես պտղատու տնկարկները: Դրա պատճառն այն է, որ պտղատու այգիները մեծ մասամբ ոչ մի խնամք չեն ստանում, չեն փորվում և նրանց մեջ մոլախոտերի դեմ պայքար չի տարվում: Ընդամենը հայտաբերված 181 տեսակ մոլախոտերից այգիներում հայտաբերվել է 80 տեսակի մոլախոտ:

Բացի ցանքերում տարածված մոլախոտերից, մենք որոշել ենք նաև զտված և պահեստները լցված սերմացուի աղբոտվածությունը, նպատակ ունենալով պարզելու սերմանյութի հետ ցանվող և դաշտերի աղբոտվածությունը մեծացնող մոլախոտերի քանակը և նրանց բնույթը: Զուգահեռաբար որոշել ենք նաև սերմացուի մի քանի հատկանիշները (ծավալային կշիռը, բացարձակ կշիռը):

Սերմացուի մեջ հայտաբերվել են հետևյալ մոլախոտերի սերմերը և պտղիկները՝ Agropyrum repens, Anchusa italica, Atriplex tatarica, Avena *(տարբեր)*, Bromus *(տարբեր)*, Caucalis daucoides, Cephalaria syriaca, Chenopodium album, Convolvulus arvensis, Cuscuta *(տարբեր)*, Echinochloa crus galli, Falcaria (sp), Galium *(տարբեր)*, Lallemantia peltata, Lathyrus *(տարբեր)*, Lolium *(տարբեր)*, Melilotus *(տարբեր)*, Medicago *(տարբեր)*, Onobrychis (sp.), Polygonum *(տարբեր)*, Setaria *(տարբեր)*, Sorghum halepensis, Trifolium *(տարբեր)*, Vicia *(տարբեր)*:

Թվարկված մոլախոտերից հողում ամենից շատ պարունակվում էին հետևյալ մոլախոտերի սերմերը, Avena *(տարբեր)*, Galium *(տարբեր)*, Lolium *(տարբեր)*, Setaria *(տարբեր)*, Vicia *(տարբեր)*: *Այդ մոլախոտերը մեծ քանակությամբ ներկայացված են նաև ցանքերում:*

Ցուցակում հիշատակված մոլախոտերի տարածման չափը և բնույթը Մեղրու և Ղափանի շրջանների տարբեր գոտիների ցանքերում տարբեր է, որը բացատրվում է նախ և առաջ այդ գոտիների հողային և կլիմայական պայմանների տարբերությամբ: Այսպես, դաշտային (ցածր) գոտու պայմաններում, որտեղ կլիման չոր է, օդի ջերմությունը համեմատաբար բարձր, իսկ հողային ծածկույթը ներկայացված է գլխավորապես գորշ հողերի տարբեր տարատեսակներով, իրենց տարածվածությամբ և պատճառած վնասով առանձնապես աչքի են ընկնում հետևյալ մոլախոտերը՝ Acroptilon picris, Alhagi pseudalhagi, Amarantus *(տարբեր)*, Anchusa italica, Artemisia *(տարբեր, գլխավորապես անջրդի հողերում)*, Cephalaria *(տարբեր)*, Chenopodium album, Cynanchum acutum *(բացառապես այգիներում՝ ջրովի պայմաններում)*, Cynodon Dactylon, Convolvulus arvensis, Cuscuta *(տարբեր)*, Echinochloa crus galli *(գերխոնավացած հողերում)*, Euphorbia *(տարբեր, գլխավորապես անջրդի պայմաններում)*, Falcaria vulgaris, Glycyrrhiza hirsuta, Goebelia alopecuroides, Lactuca scariola, Melilotus *(տարբեր)*, Salsola *(տարբեր)*, Setaria *(տարբեր)*, Sorghum halepensis, Vicia *(տարբեր)*.

Լեռնային տափաստանների գոտում, բարենպաստ կլիմայի պայմաններում մոլախոտային բուսականության տեսակային կազմը այլ է: Այս գոտում շատ տարածված և սուր վնասակար մոլախոտերից են՝ Agropyrum repens, Amarantus retroflexus, Astrodaucus orientalis, Atriplex tatarica, Avena *(տարբեր)*, Bromus *(տարբեր)*, Campanula rapunculoides, Carduus *(տարբեր)*, Caucalis daucoides, Cirsium *(տարբեր)*, Equisetum *(տարբեր)*, Galium *(տարբեր)*, Lathyrus *(տարբեր)*, Lolium *(տարբեր)*. Onopordon Acanthtium, Polygonum *(տարբեր)*, Ranunculus *(տարբեր)*, Rumex *(տարբեր)*, Vicia *(տարբեր)*:

Նախալեռնային գոտու անցողիկ հողակլիմայական պայմաններում մոլախոտային բուսականությունն ևս ուրույն բնույթ է կրում: Այս գոտում հաճախ հանդիպում են ինչպես լեռնային, այնպես էլ ցածր գոտու մոլախոտային բուսականության տիպիկ ներկայացուցիչները (օրինակ՝

խրփուկ և մոլասորգո, կամ զանգակածաղիկ և դառը բիան, կամ գեղավեր և արվանտակ և այլն)։ Սակայն այս գոտում կա տիպիկ, չոր նախալեռնային պայմաններին հատուկ մոլախոտեր, որոնք մյուս գոտիներում կամ չեն հանդիպում, կամ հանդիպում են քիչ դեպքերում։ Այդ տիպի մոլախոտերից են՝ Adonis aestivalis, Cichorium intibus, Delphinium (տարբեր), Fumaria (տարբեր), Vaccaria grandiflora և մի շարք այլ մոլախոտեր։

Սերմացուի որակական մի քանի ցուցանիշների որոշման տվյալները բերվում են ստորև, № 2 աղյուսակում։

Աղյուսակ 2

Սերմացուի ծավալային կշիռը, բացարձակ կշիռը և աղբոտվածությունը

	Շրջան	Կուլտուրա	Ծավալային կշիռը (մեկ լիտր կշիռը գր)	Բացարձակ կշիռը (1000 հատիկի-գր)	Մաքրությունը (% %)	Աղբը (% %)		
						Ընդամենը	Որից մոլախոտերի	
							կշիռը (%)	Քանակը նմուշում
1	Ղափան	Աշնանացան ցորեն	636,8	35,3	92,1	7,9	1,1	40
		» աշորա	657,6	27,5	89,9	10,1	3,3	90
		» գարի	559.2	42,3	89,2	10,8	2,3	87
		Գարնանացան ցորեն	694,4	36,3	91,0	9,0	0,9	39
		» գարի	532,8	40,0	91,2	8,8	1,4	62
		» հաճար	415,2	—	96,3	3,7	1,2	15
		Կորեկ	679,6	—	89,4	10,6	0,6	31
2	Մեղրի	Աշնանացան ցորեն	682,4	36,5	91,1	8,9	1,2	25
		» գարի	568,8	44,7	90,5	9,5	1,6	28
		Գարնանացան ցորեն	692,8	30,7	93,0	7,0	0,2	14
		» գարի	522,0	38,9	88,7	11,3	2,1	30
		» հաճար	434,0	—	89,0	11,0	0,3	18
		Կորեկ	656,8	—	97,6	2,4	0,4	19

Աղյուսակում բերված տվյալները վկայում են այն մասին, որ ծավալային և արսոլուտ կշիռների տեսակետից ինչպես Ղափանի, այնպես էլ Մեղրու շրջաններում հացահատիկային կուլտուրաների ցանքանյութը միջին որակի է, սակայն շատ վատ ցուցանիշներ ունի աղբոտվածության տեսակետից։ Մաքրության տոկոսը կոնդիցիայից խիստ պակաս է, իսկ մոլախոտերի սերմերի քանակը խիստ մեծ։

ՄԵՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Ելնելով կոլտնտեսությունների երկամյա արտադրական փորձի հաշվառման արդյունքներից և մեր ուսումնասիրության տվյալներից (պայքարի եղանակների ուսումնասիրության գծով ստացված տվյալները շարադրվում են մեր աշխատության 2-րդ բաժնում՝ ագրոտեխնիկական բնույթի ուսումնասիրությունների արդյունքները քննարկելիս), առաջարկում ենք մոլախոտային բուսականության դեմ հաջող պայքարելու և մշակվող կուլտուրաների բարձր ու կայուն բերքատվությունն ապահովելու համար

ներդրված խոտադաշտային ցանքաշրջանառությունների դաշտերում կիրառել հետևյալ աշխատանքները.

1. Ցելահողամասում. Ինչպես Ղափանի, այնպես էլ Մեղրու շրջանի կոլտնտեսություններում կիրառել բացառապես սև ցել, որը մշտապես պահել մոլախոտերից մաքուր, փուխր և սև վիճակում։ Լեռնային և նախալեռնային գոտիների անտառներին կից մթնոլորտային տեղումներով առատորեն ապահովված վայրերում, ինչպես նաև ցածրադիր գոտու ջրովի հողերում կիրառել զբաղված ցել, մշակելով վիկ-վարսակի խառնուրդ՝ թարմ խոտ ստանալու կամ արևածաղիկ, եգիպտացորեն (ոլոռի կամ վիկի խառնուրդով)՝ սիլոս պատրաստելու համար։

Սև ցելի ամառային շերտային մշակությունը կատարել 2—3 անգամից ոչ պակաս՝ առաջինը 7—8 սմ, երկրորդը՝ 8—10 սմ և երրորդը՝ 10—12 սմ խորությամբ, իսկ ուժեղ մոլախոտված հողերում՝ 3—4 անգամ։ Առանձնակի ուշադրություն դարձնել տարբեր մացառների, մոշի և կոճղարմատավոր ու ծլարմատավոր մոլախոտերի (արվանտակ, մոլասորգո, պատատուկ, կատ և ուրիշները) ոչնչացման վրա, որոնք տարածված են ամենուրեք և մեծ վնաս են պատճառում մշակվող կուլտուրաներին, միաժամանակ զգալի չափով դժվարացնելով դաշտային աշխատանքները։

Այդ մոլախոտերի արագ ոչնչացման նպատակով անպայմանորեն և լրիվ կիրառել խարակման, շնչահեղձման և հյուծման եղանակները։ Միաժամանակ վարի և կրկնավարի ժամանակ ակոսի միջից խնամքով հավաքել այդ մոլախոտերը, նրանց ստորերկրյա զարգացման օրգանները, դաշտից դուրս տանել և ոչնչացնել։

Հզոր շերտ ունեցող հողերում հիմնական վարի խորությունը հասցնել 25—30 սմ-ի, իսկ խոզանի երեսվարը առայժմ, մինչև համապատասխան գործիքներ ստանալը, կատարել կուլտիվատորներով, թեերը հանած բազմագործիքներով, ծայրահեղ դեպքում նաև արորով, հնարավորին չափ սաղր՝ որքան թույլ են տալիս այդ գործիքները։

2. Ցանքաշրջանառության մեջ մտնող կուլտուրաների ցանքերում։ Բոլոր կուլտուրաների ցանքը կատարել բացառապես ցանքաշրջանառությունների համապատասխան դաշտերում, թույլ չտալով որևէ խախտում։ Ցանել միայն լավ զտված, մաքրված, մոլախոտերի սերմերից միանգամայն զերծ, բարձր ծլունակությամբ օժտված, պետական կոնդիցիային համապատասխան, ջերմաօդային մշակման ենթարկված սերմացու։ Ցորենի և գարու սերմացուն նաև ախտահանել։

Աշնանացան հացաբույսերը մշակել բարձրորակ ցելի վրա, ճմուտում և շուռ տված ճմուտում, նաև շարքահերկ կուլտուրաներից, միամյա խոտաբույսերից, հատիկային ընդեղեններից, հացաբույսերից հետո։ Սև ցելում աշնանացան հացաբույս մշակելու դեպքում ցելի երկակի վարը կամ կրկնավարը կատարել ցանքից 20—25 օր առաջ միայն, իսկ զբաղված ցելի հիմնական խոր վարը՝ ցանքից մոտ 1,5—2,0 ամիս առաջ։ Բնական կամ արհեստական ճմուտում, հացահատիկային կուլտուրաներից, միամյա խոտաբույսերից, միամյա վաղահաս ընդեղեններից հետո աշնանացան մշակելու դեպքում խոզանի երեսվարը համարել կարևորագույն աշխատանքներից մեկը և կատարել անպայմանորեն։ Երբ աշնանացան հացահատիկի նախորդը բանջարաբոստանային կուլտուրա, կարտոֆիլ կամ մի որևէ այլ

շարքահերկ կուլտուրա է, բերքահավաքից անմիջապես հետո կատարել միայն խոր վար, առանց խոզանի երեսվարի։

Գարնանացան հացաբույսերի և այլ գարնանացան կուլտուրաների ցանքը կատարել բացառապես բարձրորակ ցրտահերկ ստացած հողերում։ Գարնանային վարը (հիմնական-խոր), իբրև ընդհանուր կանոն, վերացնել։ Երբ այդ կուլտուրաների ցանքը կատարվում է բազմամյա խոտաբույսերից և ուշահաս շարքահերկ կուլտուրաներից հետո, բավարարվել միայն խոր ցրտահերկով, իսկ երբ դրանց նախորդը հացահատիկային կուլտուրա, միամյա խոտաբույս կամ վաղահաս ընդեղեն է, ցրտահերկից առաջ անպայմանորեն կատարել խոզանի երեսվար։ Ոռնավորությամբ ապահովված վայրերում լավ ցրտահերկ ստացած հողերում հացահատիկային կուլտուրաների և բազմամյա ու միամյա խոտաբույսերի ցանքից առաջ կատարել հողի փխրեցում 10—12 սմ խորությամբ, իսկ խոնավությամբ պակաս ապահովված վայրերում բավարարվել միայն հողը լավ և խոր փոցխելով։ Շարքահերկ կուլտուրաներ մշակելիս (բանջար-բոստանային կուլտուրաներ, ծխախոտ, կարտոֆիլ, գետնանուշ, լոբի, մաշ և այլն) բոլոր պայմաններում կատարել հողի նախացանքային փխրեցում 12—15 սմ խորությամբ։

Գարնանացան ցորենի, գարու, հաճարի, արևածաղկի, բազմամյա և միամյա խոտաբույսերի, կարտոֆիլի ցանքը կատարել վաղ, հողի քեշին, իսկ բանջար-բոստանային կուլտուրաների՝ լոբու, ոլոռի, բակլայի, գետնանուշի ցանքը կատարել, երբ հողի ջերմությունը 8—10° C-ից պակաս չէ։ Դրանից մի փոքր ուշ կատարել նաև ծխախոտի սածիլումը։ Բոլոր կուլտուրաների ցանքը կատարել հավասար խորությամբ, ուղիղ շարքերով, մեծ զարկ տալով հացահատիկային կուլտուրաների և միամյա խոտաբույսերի խաչաձև ցանքին։

Ըստ առանձին գոտիների տարբեր կուլտուրաների և տարբեր սորտերի ցանքի համար սահմանել հետևյալ ժամկետները, նորմաները և խորությունը (աղյուսակ № 3)։

Աշնանացանների գարնանային փոցխումը կատարել, երբ բույսերը նոր սկսում են կանաչել։ Հացահատիկային կուլտուրաների ցանքերի քաղհանը կատարել երկու անգամից ոչ պակաս։

Բանջար-բոստանային կուլտուրաների և այլ շարքահերկ բույսերի քաղհանը կատարել ըստ կարիքի և այն հաշվով, որ ցանքերը մինչև վեգետացիայի վերջը միշտ մաքուր լինեն փուխր և մոլախոտերից միանգամայն մաքուր վիճակում, միջշարքային տարածությունները նաև կուլտիվատորել։ Քաղհան կատարել նաև բազմամյա և միամյա խոտաբույսերի ցանքերում։

Բոլոր ցանքերում մոշի թփերը և կոճղարմատավոր ու ծլարմատավոր մոլախոտերը հողի մեջ խոր կտրել, դուրս տանել դաշտից և ոչնչացնել։

Ոռոգվող հողերում ոռոգումը կատարել ըստ պահանջի։

Հացահատիկային կուլտուրաների բերքահավաքը կատարել լրիվ հասունության սկզբում, բազմամյա և միամյա խոտաբույսերի հունձը խոտի համար՝ կոկոնակալման վերջում՝ ծաղկման սկզբում։ Բոլոր կուլտուրաների բերքահավաքը կատարել սեղմ ժամկետում, թույլ չտալով, որ մոլախոտերի սերմերը ավելորդ ժամանակ մնան դաշտում, թափեն իրենց սերմերը և վարակեն հողը։ Հացահատիկային կուլտուրաների, միամյա խոտաբույսերի, վաղահաս ընդեղենների բերքահավաքին զուգընթաց կատարել

Աղյուսակ 3

Ցանքի ժամկետները, նորմաները և խորությունն ըստ առանձին գոտիների

Գոտի	—	Աշնանացան		Գարնանացան				
		Ցորեն	Գարի	Ցորեն	Գարի	Հաճար	Կարտոֆիլ	Կորնգան
Ցածրադիր (դաշտավար.)	Ժամանակը	15/9—15/10	1/1С—15/10	Վաղ գարնանը, հողի քեշին				
	Նորման (կգ/հ.)	150—160	160—170	130—140	1 0—160	155—165	16—18 ց.	100
	Խորությունը (սմ)	5—6	5—6	4—5	4—5	4—5	8—10	2—3
Նախալեռնային	Ժամանակը	5/9—5/10	20/9—5/10	Վաղ գարնանը, հողի քեշին				
	Նորման (կգ/հ.)	160—170	170—180	140—150	160—170	165—175	18—22 ց.	110
	Խորությունը (սմ)	6—7	6—7	5—6	5—6	5—6	8—10	3—4
Լեռնային	Ժամանակը	25/8—15/9	5/8—20/9	Վաղ գարնանը, հողի քեշին				
	Նորման (կգ/հ.)	170—180	180—19Ͻ	150—160	170—180	175—185	22—25 ց.	120
	Խորությունը (սմ)	6—7	6—7	5—6	5—6	6—7	8—12	3—4

խոզանի երեսվար, իսկ բանջար-բոստանային կուլտուրաների և այլ շարքահերկ կուլտուրաների բերքահավաքին զուգընթաց՝ խոր վար։

Բոլոր կուլտուրաների բերքի փոխադրումը կատարել զգույշ և մեծ խնամքով, որպեսզի ճանապարհին մոլախոտերը չթափվեն, չցրվեն և դաշտերը չվարակեն։ Փոխադրությունից հետո դեզատեղերը լավ մաքրել, իսկ անպետք թափուկները այրել։

Խիստ թեքություն ունեցող լանջերում հողը լվացվելուց և քայքայվելուց պաշտպանելու նպատակով, ըստ հնարավորության, խուսափել միամյա կուլտուրաներ մշակելուց և զբաղեցնել բազմամյա խոտաբույսերով։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Вильямс В. Р.*—Почвоведение. Земледелие с основами почвоведения. Сельхозгиз, Москва, 1947.
2. *Мириманян Х. П.*—Черноземы Армении. Ак. наук СССР, Москва, 1940.
3. *Магакьян А. К.*—Растительность Армянской ССР. Изд. Ак. наук СССР. Москва—Ленинград, 1941.
4. *Фигуровский И.*—Местные и общие ветры на Кавказе. СПБ., 1905.
5. *Фигуровский И.*—Краткий климатический очерк Кура-Араксинского бассейна. Матер. К-Аракс бассейна, вып. 1, Тифлис, 1930.
6. *Ярошенко П. Д.* и *Григорян К. Ф.*—Субтропический Мегри. Арм. ФАН, Ботан. инст., Труды, вып. III, Ереван, 1941.

Г. Х. АГАДЖАНЯН

ПОЛЕВОДСТВО ЮГО-ВОСТОЧНЫХ РАЙОНОВ АРМ. ССР (КАФАН, МЕГРИ)

Сообщение первое

Сорно-полевая растительность и борьба с ней

Резюме

Изучение проведено в Мегринском и Кафанском районах в 1947—1948 гг. экспедиционным путем. Изучением выявлена картина засоренности посевов озимых (пшеницы, ржи) хлебов, яровых зерновых (пшеницы, ячменя, полбы), пропашных культур (табака, свеклы, картофеля, овощных культур и др.), многолетних трав (люцерны, эспарцета), паровых полей, виноградников и плодовых насаждений. Число выявленных видов сорняков доходит до 181.

Наименее засоренными являются посевы многолетних трав, паровых полей, пропашных культур. Наиболее засоренными—посевы озимых и яровых зерновых и сады.

Наиболее злостными и трудно искоренимыми сорняками являются: Acroptilon picris, Agropyrum repens, Avena fatua, Avena Ludoviciana, Cirsium *(տարբեր)*, Cynodon Dactylon, Convolvulus arvensis, Cuscuta *(տարբեր)*, Alhagi pseudalhagi, Goebelia alopecuroides, Sorghum halepensis и др.

Одновременно с изучением засоренности посевов проводилось также изучение засоренности семенного материала. Оказалось, что по чистоте семена зерновых не отвечают требованиям, установленным государством, ибо процент живого сора (семена сорняков) в них слишком велик.

В конце работы излагаются мероприятия по борьбе с сорняками.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
АРМЯНСКИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ИНСТИТУТ
Գիտ. աշխատութ. ժողովածու № 7, 1952 Сборник научных трудов

Х. П. МИРИМАНЯН

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ АГРОТЕХНИКИ ПЛОДОВОДСТВА

Плодоводство является одной из важнейших отраслей сельскохозяйственного производства, но, в силу ряда социальных и экономических условий прошлого, до установления у нас советской власти оно не удостаивалось должного внимания, и, в связи с этим, в экономике нашего хозяйства до последнего времени не смогло играть подобающей роли. После победы Великой Октябрьской социалистической революции, когда открылись беспредельные возможности для широкого развития производительных сил страны, мероприятиями советской власти резко увеличились площади под плодовые насаждения, и поднялся удельный вес продукции плодоводства.

Но в свете новых задач существовавшие до сих пор темпы развития плодоводства, в особенности по части поднятия урожайности, нас уже не могут удовлетворить. Мы должны развернуть плодоводство более быстрыми темпами с тем, чтобы в кратчайший срок полностью удовлетворить потребность трудящихся города и деревни в течение всего года свежими высокопитательными плодами и ягодами и обеспечить растущую потребность нашей консервной промышленности.

Наша задача в этом направлении заключается в том, чтобы, с одной стороны, путем широкого применения комплекса агротехнических мероприятий, разработанных трудами Мичурина—Вильямса—Лысенко, добиться в наших совхозах, колхозах, приусадебных участках и садах трудящихся устойчивых и все возрастающих урожаев плодово-ягодных культур, с другой—обеспечить правильную посадку новых садов и надлежащий уход за новыми насаждениями.

Если рассмотреть плодовое дерево как живое растение, как это делают наши крупные мастера высоких урожаев, если обеспечить плодовые деревья водой и пищей, воздухом и светом, если оградить их от агрессии вредителей и болезней, как это делают передовики плодоводства, то можно совершенно ликвидировать периодичность плодоношения и обеспечить устойчивую, все возрастающую урожайность наших садов.

В связи с этим необходимо остановиться на некоторых вопросах агротехники, правильное разрешение которых бесспорно поможет нам значительно поднять продуктивность плодоводства.

Первостепенной важности вопрос, являющийся основой наших успехов в плодоводстве, это—правильный выбор места для посадки новых плодовых насаждений.

Во многих случаях у нас, в Армении, не обращают на это серьезного внимания, в результате чего мы очень много теряем, так как ошибку, допущенную при выборе места, в дальнейшем уже трудно исправлять. Здесь надо учесть прежде всего почвенные условия, строение подпочвенных горизонтов, подстилающих грунтов, режим грунтовых вод с тем, чтобы создать возможность дифференцированной обработки, изменения и улучшения отрицательных свойств в соответствии с требованием отдельных плодовых культур и пород.

Не менее важно правильное размещение последних, исходя из различных биологических особенностей и требований к условиям среды отдельных плодовых. Исключительно важны рельеф и экспозиция местности, которые должны, с одной стороны, обеспечить благоприятные термические условия, с другой—спасти деревья от зимних морозов. Например, в условиях Армении в Иджеванском, Шамшадинском районах миндаль, посаженный в долине или на ровных местах, во многих случаях вымерзает, в, то время, как на склонах он зимой прекрасно себя чувствует. То же наблюдается в отношении абрикосов; это объясняется тем, что мощный поток холодного воздуха с гор лавиной врывается в долины, в результате мы лишаемся в лучшем случае урожая, а то и дерево вовсе вымерзает. Другой пример: те же миндали и абрикосы, посаженные на южных склонах, в условиях Армении, весной пропадают, а на северных—нет. Это объясняется тем, что на южных склонах указанные насаждения весной рано зацветают и при поздних весенних заморозках пропадают, в то время как на северных склонах они зацветают несколько позже, когда опасность весенних заморозков уже проходит.

Наконец, при выборе места в высшей степени важен правильный учет климатических условий, в первую очередь, направление ветров и холодных воздушных потоков, которые, с одной стороны, иссушают почву, с другой—мешают опылению, с третьей—зимой резко понижают температуру, являясь причиной гибели плодовых деревьев.

Само собой понятно, что в орошаемых районах при выборе места необходимо учитывать возможность нормального полива. Например, при плотных цементируемых почвах Октемберянского района Арм. ССР вода при неблагоприятном уклоне быстро стекает, совершенно не поглощаясь почвой.

Другой, не менее серьезный вопрос, который у нас не всегда и не всюду удостаивается должного внимания, это—предварительное заблаговременное освоение новых земель, отводимых под плодоводство, их мелиорация, обогащение питательными веществами, улучшение их физических свойств, правильная организация территории.

В этом вопросе общего подхода без точного учета конкретных почвенных условий каждой области, республики, каждого земельного участка не может быть. Если на беспредельных равнинах украинских степей с мощными богатыми черноземами, залегающими на

лёссах, достаточна предпосадочная обработка, то в наших условиях, где под плодоводство отводятся вновь орошаемые, порой каменистые полупустыни, например, „киры“, с ничтожным количеством питательных веществ, с неблагоприятными физическими свойствами без предварительного освоения территории и мелиоративных мероприятий нельзя сажать плодовые деревья.

Перед тем, как эти почвы обсадить плодовыми деревьями, надо их обогатить органическими веществами; для постоянного снабжения растений элементами пищи их необходимо удобрять органическими и минеральными удобрениями. В них нужно создать свойства водопроницаемости и водопрочности, нужно иметь рыхлую массу. Этот вопрос можно разрешить культурой смеси многолетних трав при условии хорошей их обработки.

Работы Института плодоводства Академии наук Арм. ССР показали, что в условиях полупустыни, даже после многолетней обработки и культуры, после многолетнего орошения заметное количество органических веществ накопляется только в пределах не более 15—20 см, где распространена корневая система травянистой растительности, а глубже нет перегноя, ибо корневая система древесных насаждений сама не накопляет органического вещества. Отсюда вытекает необходимость создания более мощного слоя почвы со значительным содержанием органических веществ не только перед началом посадки, но и в дальнейшем, что действительно обеспечит высокую урожайность плодовых насаждений.

Некоторые неудачи в ряде совхозов Главконсервтреста в Армении в смысле низкой их продуктивности в значительной мере объясняются именно тем, что при посадке плодовых там не проводятся предварительное освоение и организация территории.

Следующий агротехнический вопрос это—непосредственная подготовка почвы, предпосадочная обработка, основным назначением которой является обеспечение растения питательными веществами в доступной форме, водой и воздухом. А эти жизненно важные элементы осваиваются плодовыми культурами тонкой активной частью корневой системы, которая распространяется в стороны на несколько метров и постепенно занимает все междурядие в плодовом саду, но никак не ограничивается пределами небольших ям, которые обычно у нас выкапываются. Поэтому ясно, что *существующую до сих пор систему посадки плодовых деревьев в отдельных ямах необходимо пересмотреть*. Кое-где сейчас уже применяются сплошные обработки земель, отводимых для плодоводства. Это очень хорошо, но обрабатывается неглубоко, что не снимает необходимости выкапывать дорогостоящие, по существу мало дающие ямы.

В ряде областей и республик нашего Союза в настоящее время изучается вопрос о глубине и ширине этих ям для посадок плодовых деревьев, что на *сегодня уже теряет свое практическое значение*. Мы считаем, что для обеспечения нормального роста и раз-

вития плодовых деревьев необходимо копать не отдельные ямы, а провести сплошную глубокую, до 60—70 см, обработку тракторными плантажными плугами, что в полной мере удовлетворяет все требования плодовых культур и исключает необходимость выкапывания вручную отдельных дорогостоящих и не совсем себя оправдывающих ям.

Следующий после предпосадочной обработки этап работы это—создание садозащитных и ветроломных лесных полос, которое по существу должно предшествовать посадке деревьев.

Садозащитные лесные полосы берегут плодовые насаждения от сухих и холодных ветров, увеличивают влажность воздуха, защищают около себя плодовые деревья от вымерзания в зимнее время. Мы еще не говорим о других положительных действиях такой защиты при сборе урожая, при опылении и завязывании плодов и пр. Садозащитная полоса улучшает микроклимат, повышает эффективность агротехнических мероприятий, что очень важно.

Так, например, мы наблюдали, как после тяжелой зимы 1949—1950 гг. в некоторых районах Армении (Узунтала, Иджеванского района) миндаль, груша, даже гранат, находящиеся под защитой абрикосовых деревьев или грецкого ореха, совершенно не вымерзли и дали нормальный урожай, в то время как насаждения, расположенные несколько дальше, погибли.

К сожалению, на садозащитные полосы у нас обращают мало внимания. Если это и делают, то обычно ограничиваются 1—2 рядами тополей, что далеко недостаточно. Точно не учитывают направление ветров и холодных воздушных потоков, что неверно. Не сажают ветроломных преград и внутри самих садов, вокруг отдельных кварталов. Не всегда используется возможность создания живых изгородей для защиты насаждений, в особенности молодых. Будет весьма полезно и оросительную сеть обсадить деревьями.

Далее необходимо остановиться на одном из основных агротехнических вопросов, обеспечивающих успех в борьбе за урожай плодовых. Это вопрос об обработке приствольных кругов (чашек) и междурядий в целом.

По традиции из года в год во многих областях и республиках Союза мы проводим обработку приствольных кругов, что в весенний разгар сельскохозяйственных работ отнимает сотни тысяч рабочих рук и требует миллионные средства.

Но надо ли копать вокруг самого дерева в плодоносящем саду такие чашки?

Чашки копаем для того, чтобы обеспечить корни плодового дерева воздухом, необходимым для дыхания. Разрыхляем почву, чтобы она забирала больше воды для дерева, кладем туда удобрение, чтобы накормить дерево. Но в какой степени плодовые деревья действительно пользуются водой, воздухом и пищей, которые мы преподносим через эти чашки?

Всем известно, что живое дерево дышит, питается и забирает воду только через тонкую часть корневой системы, которую поэтому и называют активной.

Но бесспорно и то, что эта корневая сеть взрослого дерева в основном распространяется дальше от ствола, за пределами чашки, в большинстве случаев далеко за пределы проекции кроны. Ведь в самом деле, основная масса тонкой корневой системы фактически занимает все междурядие и при обработке, даже неглубокой, ее всегда можно обнаружить. Многочисленные работы Кварацхелия, Колесникова, Шита, Метлицкого, Белхонова и ряда других ученых нашей страны убедительно показывают, как далеко идет тонкая сеть корневой системы. Если это так, а это действительно так, то зачем же заливать водой только чашку вокруг дерева, когда там мало тонких корней, зачем только туда класть удобрение?

Я еще не говорю о том, что, заливая чашки водой, мы распыляем почву, заболачиваем, местами создаем опасность засоления, непроизводительно тратим драгоценную для нас воду.

Критическая оценка такого положения приводит к необходимости отказаться от традиционной непроизводительной системы обработки приствольных кругов и перейти к сплошной обработке междурядий, бороздовому способу полива, который является наиболее рациональным, и к удобрению территории с густой сетью тонких корней.

В 1950 г. на экспериментальной базе Института плодоводства Академии наук Армянской ССР, недалеко от Еревана в абрикосовом саду (сорт шалах), отказавшись от перекопки приствольных кругов, мы применили сплошную тракторную обработку междурядий, удобрение и бороздовый полив, что дало весьма хорошие результаты.

Отсюда возникает новый вопрос—а как обработать эти междурядия, чтобы получить максимальный эффект?

Для обеспечения плодовых деревьев воздухом, водой и пищей часть специалистов считает целесообразным в междурядиях проводить паровую обработку. Черный пар безусловно имеет ряд преимуществ. Он способствует накоплению нитратов, сберегает воду, уничтожает сорняки и пр. Но при длительном существовании пара происходит разрушение и распыление не только структуры, ухудшающее дыхание корней и водный режим, но и начинается энергичный распад—минерализация потенциальных запасов органического вещества.

Другие предлагают естественное залужение междурядий, фактически превращение их в сенокос.

В этом случае в почве накопляется органическое вещество, создается хорошая структура, но впоследствии с прогрессивным возрастанием органического вещества происходит ухудшение структуры, затрудняется дыхание корней, ухудшается водный режим, задерживается минерализация органических веществ, без чего растение не может питаться, стало быть, и не может дать большего урожая.

Анализ такого положения неизбежно приводит к необходимости

чередования черного пара, может быть и занятого, культурного залужения путем посева смеси многолетних трав, а если к этому прибавить необходимость широкого применения органических и минеральных удобрений, станет понятной целесообразность применения системы обработки междурядий по принципу травопольных севооборотов, т. е. применение в плодоводстве принципов комплекса Докучаева—Вильямса, что улучшает структуру почвы, регулирует водный режим, обогащает почву питательными веществами.

Последний вопрос, на котором надо остановиться, это вопрос о рациональном использовании почвенных ресурсов в целях получения от плодоводства большей продукции. Это прежде всего касается вопроса густоты посадки—сколько сажать на гектар, на каком расстоянии сажать друг от друга деревья и т. д.

В этом вопросе до последнего времени мы также шли по старому—сажали редко, что в условиях поливного хозяйства и высокой производительности солнечной энергии в Армянской ССР и вообще в южных областях и республиках нашего Союза совершенно не целесообразно.

Возможность обогащения почвы питательными веществами, улучшения их физических свойств, изучение биологических особенностей отдельных плодовых культур, в частности и корневой системы, чему до сих пор также уделяется мало внимания, дает нам основание решительно пересмотреть существующие нормы посадки в направлении увеличения густоты посадки и максимального использования почвы, как производительной силы.

Работы Т. Д. Лысенко блестяще подтверждают продуктивность такого подхода.

Необходимо уплотнить посадки до такой степени, чтобы, во-первых, не мешать нормальной ассимиляционной деятельности листовой массы. В этом деле большую помощь оказать регулирующие рост и плодоношение, обрезка и формирование дерева, во-вторых, обеспечить нормальную и полную механизацию обработки междурядий.

Уплотнение должно быть как в рядах, так и в междурядиях. В этом отношении выявляются две точки зрения. Одни предлагают уплотнить посадки в рядах, сажая между основными культурами другие, менее долговечные, некрупные, например, между абрикосами сажать персики. Когда абрикосы вступят в пору полного товарного плодоношения и достигнут максимальных размеров, персики за это время дадут значительную продукцию и сами собой выбудут из строя. Другие считают это менее целесообразным, что связано с различными требованиями к обработке и культуре различных пород: полив, лечение и пр. и предпочитают загущение теми же породами, с тем, чтобы в период полной зрелости часть просто вырубить.

Практически этот вопрос можно разрешить, исходя из хозяйственной целесообразности и конкретных условий каждой местности.

Наконец, необходимо смело ставить вопрос о целесообразности использования междурядий и для других культур—овощных, бахчевых и др., в особенности в первые годы, в молодом, еще неплодоносящем саду, где корневая система и крона молодых деревьев еще не занимают все пространство ни в воздухе, ни в почве.

Небесполезно также напомнить, что умелая выкопка саженцев, заботливая упаковка, транспортировка, хранение, всемерное сбережение тонких корешков от поломок и высыхания, выращивание хорошего, здорового, однородного посадочного материала, широкая мобилизация местных удобрений, правильный подбор и районирование сортов и подвойного материала, своевременное лечение в свою очередь играют огромную роль в поднятии урожайности плодовых насаждений.

В соответствии с учением марксизма-ленинизма и основами мичуринской агробиологической науки, к основным вопросам агротехники, к установившимся положениям и нормам надо подходить творчески, критически, не превращая их в догму, а, учитывая местные условия, конкретные особенности природы и хозяйства каждого района, каждого колхоза и совхоза, надо усовершенствовать и развивать их в свете новых данных науки, новых фактов, добытых практикой передовиков сельского хозяйства, новых народнохозяйственных задач.

Խ. Պ. ՄԻՐԻՄԱՆՅԱՆ

ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ամփոփում

Պտղաբուծության զարգացման ասպարեզում մեր առաջ խնդիր է դրվում վճռական տեմպերով բարձրացնել պտղատու կուլտուրաների բերքատվությունն ու բարելավել այգիների մշակումը այն հաշվով, որ կարճ ժամանակվա ընթացքում ապահովել գյուղի ու քաղաքի աշխատավորության պահանջը, տալով նրան թարմ միրգ ամբողջ տարվա ընթացքում և ապահովել մեր կոնսերվի արդյունաբերությունը անհրաժեշտ հումույթով:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է կանգ առնել պտղաբուծության ագրոտեխնիկայի մի քանի հարցերի վրա, որոնց ճիշտ լուծումը կնպաստի պտղաբուծության արտադրողականության բարձրացմանը:

Ամենից առաջ անհրաժեշտ է, նախ քան պտղատու այգի տնկելը, ճիշտ կերպով ընտրել հողամասը և առանձին կուլտուրաները տեղադրել իրենց բիոլոգիական առանձնահատկություններին համապատասխան, հաշվի առնելով տեղի ռելեֆը, հողային պայմանները, գրունտի ջրերի խորությունը, դիրքը, կլիմայական պայմանները, և այլն:

Դրա հետ միասին անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել այգու համար նախատեսված հողամասի նախնական մշակման, իրացման, հողի օրգանական նյութերով հարստացման, նրա հատկությունների բարելավման, մելիորացման, տերիտորիայի ճիշտ կազմակերպման հարցերի վրա:

Այնուհետև պտղատու այգին տնկելուց առաջ անհրաժեշտ է առանձին փոսեր քանդելու փոխարեն, որը շատ մեծ ծախսեր է պահանջում, կատա-

րել հողամասի համատարած խոր վարը պլանտաժային գութաններով՝ 60—70 սմ խորությամբ։

Այդպիսի մշակումից հետո պետք է ստեղծել այգեպաշտպան անտառային շերտերի մի ամբողջ ցանց, որը պիտի պաշտպանի այգին ամբողջությամբ ու նրա առանձին մասերը չոր ու ցուրտ քամիներից, կուտակի խոնավություն, ապահովի նրանց ցրտահարությունից և այլն։

Նկատի ունենալով, որ պտղատու ծառերի արմատային նուրբ ցանցը, որի միջոցով նրանք սնվում են ու ստանում ջուր ու օդ, հիմնականում գտնվում է ոչ թե բնի չորս կողմը, այլ ավելի հեռու, միջշարքային տարածություններում, նպատակահարմար է պտղատու այգում ծառերի շուրջը հսկայական քանակությամբ բաժակներ ձեռքով փորելու փոխարեն կիրառել միջշարքային տարածությունների մեքենայացված համատարած վար ու մշակում, պարարտացում, ակոսային ջուր և այլն, որը բարելավելով պտղատու կուլտուրաների աճման ու զարգացման պայմանները, նպաստում է բերքատվության բարձրացման։

Միջշարքային տարածությունների հողը բարելավելու, նրա բերրիությունը բարձրացնելու, պտղատու ծառերի արագ զարգացմանը նպաստելու նպատակով անհրաժեշտ է այդ ազատ տարածությունների վրա պարբերաբար մշակել բազմամյա խոտաբույսերի խառնուրդ, որը մի քանի տարվա օգտագործումից հետո նորից վարել, ցելի վերածել, պարարտացնել, ապա կարճ ժամանակից հետո նորից դնել խոտաբույսերի տակ։

Մեր հողային հարստությունները, արևի բարձր էներգիան, մեր ջրային ռեսուրսները լրիվ կերպով օգտագործելու նպատակով մի կողմից անհրաժեշտ է նպատակահարմար ու մտածված կերպով խտացնել տնկումները, մյուս կողմից՝ միջշարքային տարածություններում, բացի բազմամյա խոտաբույսերից, հիմնականում առաջին տարիները, երիտասարդ այգում մասամբ օգտագործել նաև որոշ բանջարանոցային կուլտուրաների՝ լրացուցիչ բերք ստանալու համար։

Պտղաբուծական կուլտուրաների բերքատվության բարձրացման նպատակով անհրաժեշտ է նաև ուշադիր կերպով ու խնամքով աճեցնել ու փոխադրել տնկիները, լայն օգտագործել տեղական պարարտանյութերը, ճիշտ ընտրել և տեղադրել սորտերը, ժամանակին բուժել և այլն։ Վերջապես, ելնելով մարքսիզմ-լենինիզմի և սովետական առաջավոր ագրոբիոլոգիական գիտության հիմունքներից ագրոտեխնիկայի հիմնական հարցերին, հրապարակի վրա եղած գիտական տվյալներին, ընդունված դրույթներին անհրաժեշտ է մոտենալ ոչ թե դոգմատիկ կերպով, այլ քննադատորեն, ստեղծագործորեն և ամեն մի դեպքում հաշվի առնել տեղի կոնկրետ պայմանները։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
АРМЯНСКИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ИНСТИТУТ
Գիտ. աշխատութ. ժողովածու № 7, 1952 Сборник научных трудов

Ա. Ա. ՄԱՏԹԵՎՈՍՅԱՆ

ԲԱԶՄԱՀԱՐ ԿՈՐՆԳԱՆԻ ՑԱՆՔԻ ԲԱՐՁՐ ՆՈՐՄԱՆ ՈՐՊԵՍ ՀՈՂԻ ԲԵՐՐԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ

Ագրոնոմներից շատերին հայտնի է, որ հաճախ մեզ մոտ, հատկապես նախալեռնային և մասամբ էլ լեռնային չոր պայմաններում կորնգանը լավ չի աճում և տալիս է փոքր մասսա։ Դրա հետևանքով փոքր ճմաշերտ է ստեղծվում, հաջորդող կուլտուրայի բերքատվությունն էլ շատ աննշան չափով է բարձրանում։

Վ. Ռ. Վիլյամսը սովորեցնում է, որ հողառաջացման ամբողջ պրոցեսն ընթանում է ներքին հակասությունների հիման վրա։ Խոտադաշտի վարելաշերտում տեղի է ունենում մի կողմից օրգանական նյութերի առաջացում և կուտակում, մյուս կողմից էլ այդ կուտակված նյութերի տարրալուծում՝ քայքայում։

Խոտադաշտում հողի բերրիությունն այն դեպքում կարող է պրոգրեսիվ կերպով բարձրանալ, եթե վարելաշերտում օրգանական նյութերի կուտակումն ավելի մեծ չափով տեղի ունենա, քան քայքայումը։

Հայկական ՍՍՌ-ի նախալեռնային ու չոր լեռնային պայմաններում հողի վարելաշերտում օրգանական նյութերը շատ արագ կերպով են քայքայվում։

Մեր ուսումնասիրություններից պարզվել է, որ խոտադաշտում օրգանական նյութերի առաջացման ու կուտակման, ինչպես նաև այդ նյութերի տարրալուծման ու քայքայման ինտենսիվությունն ու ուղղությունը կախված են խոտածածկոցի խտությունից։

Կորնգանի ցանքի նորմայի վերաբերյալ կան հակասական կարծիքներ։ Ցակուշկինը, Կոսարևը, Սկրեպինսկին, Տրավինը, Խարչենկոն առաջարկում են կորնգանի ցանքի նորման իջեցնել և հասցնել 60—70 կգ/հ, նույնիսկ 50 կգ/հ։

Բազմահար կորնգանի ցանքի նորման որոշելիս նկատի պետք է ունենալ նրա սերմերի առանձնահատկությունները։ Հայտնի է, որ մեկ կիլոգրամ կորնգանի սերմանյութը պարունակում է մոտ 45.000 հատ պտուղունդ։ Հայտնի է նաև, որ խոտադաշտի նորմալ խոտածածկոցի պայմաններում մեկ հեկտարին պահանջվում է մոտ 8 միլիոն բույս, որը պետք է կազմված լինի հավասար քանակությամբ՝ թիթեռնածաղկավոր և հացազգի բազմամյա խոտաբույսերից։ Դա նշանակում է, որ խոտադաշտում պետք է լինի մոտ 4 միլիոն կորնգանի և այդքան էլ բազմամյա հացազգի բույս։

Յուրաքանչյուր հեկտարին 4 մլ. կորնգանի բույս ունենալու համար պահանջվում է ցանել 90 կգ սերմ և այդ այն դեպքում, եթե դաշտային պայմաններում կորնգանի սերմի ծլունակությունը կազմի 100%, մինչդեռ հայտնի է, որ կորնգանի սերմերի ծլունակությունը դաշտային պայմաններում երբեք 60-ից բարձր չի լինում։ Այդ նշանակում է, որ պետք է ցանել ոչ թե 90 կգ, այլ 140—150 կգ։

Նման հաշվումներ նկատի ունենալով Ախտայի շրջանի Ծանատան գյուղի անջրդի պայմաններում, ուսումնասիրել ենք բազմահար կորնգանի ցանքի խտության ազդեցությունը հողի բերրիության պայմանների վրա:

Ցանքի խտության վարիանտները եղել են՝ 50, 70, 80, 100, 110, 120, 130, 150, 160 կգ/հ: Խոտադաշտում կատարված 4 տարվա ուսումնասիրությունների արդյունքները զետեղված են № 1 աղյուսակում:

Աղյուսակում բերված թվերը ցույց են տալիս հետևյալը. ցանքի տարբեր նորմաների դեպքում ստացվում է տարբեր խտությամբ խոտածածկույթ, ըստ որում որքան ցանքի նորման մեծ է, այնքան էլ խոտածածկույթի խտությունը մեծ է: Այսպես, օրինակ, 50 կգ/հ ցանքի նորմայի դեպքում խոտադաշտի յուրաքանչյուր քառ. մետրում կա 104 բույս, 70 կգ-ի դեպքում՝ 143 բույս, 80 կգ-ի դեպքում 160 բույս և այլն: Մաքսիմում խտությամբ խոտածածկույթ ստացվում է, երբ կորնգանի ցանքի նորման կազմում է 150—160 կգ/հ:

Տարբեր նորմաներով ցանք կատարելիս խոտադաշտի մեկ հեկտար տարածության վրա բույսերի քանակը լինում է տարբեր: Կորնգանի յուրաքանչյուր հեկտարում ցանվող 4 միլիոն բույսի փոխարեն ստացվում է՝

1.	50 կգ/հ	դեպքում	1.040.000	բույս,	որը	կազմում է	26 %
2.	70 »	»	1.430.000	»	»	»	35,7 »
3.	80 »	»	1.660.000	»	»	»	41,5 »
4.	90 »	»	1.820.000	»	»	»	45,5 »
5.	100 »	»	2.070.000	»	»	»	51,7 »
6.	110 »	»	2.510.000	»	»	»	62,2 »
7.	120 »	»	2.970.000	»	»	»	78,2 »
8.	130 »	»	3.260.000	»	»	»	81,5 »
9.	150 »	»	3.870.000	»	»	»	96,7 »
10.	160 »	»	4.170.000	»	»	»	104,2 »

Թվերը խոսում են այն մասին, որ ցանքը 150—160 կգ/հ նորմայով կատարելու դեպքում միայն ստացվում է նորմալ խտությամբ ցանք:

Նկատված է, որ դաշտային պայմաններում կորնգանի և այլ խոտաբույսերի ծլած սերմերի տոկոսը բավականին ցածր է: Նա երբեք հավասար չի լինում լաբորատոր պայմաններում ծլած սերմերի քանակին:

Բնական պայմաններում՝ խոտադաշտում կորնգանը միջտեսակային ուժեղ պայքարի մեջ է մտնում զանազան մոլախոտերի հետ:

Մեր շատ դիտողություններից պարզված է, որ երբ խոտադաշտում խոտածածկույթը նոսր է լինում, այդ միջտեսակային պայքարի ընթացքում կորնգանը խիստ թուլանում է, մոլախոտերը ճնշիչ ազդեցություն են թողնում կորնգանի վրա:

Մոլախոտերի քանակը խիստ փոփոխվում է ցանքի տարբեր խտության պայմաններում: Որքան ցանքի նորման մեծ է լինում, այնքան փոքրանում է մոլախոտերի քանակը և դա հասկանալի է: Խոտածածկույթի բարձր խտության պայմաններում մոլախոտերը ոչ միայն ճնշվում են, այլև վերացվում են այն պայմանները, որոնք նպաստում են այդ մոլախոտերի առաջացմանը:

Աղյուսակ 1

Բազմահար կորնգանի ցանքի նորմայի ազդեցությունը խոտի բերքի քանակի և որակի, հողում կուտակված չոր նյութերի և հաջորդ կուլտուրայի բերքատվության վրա

Ցուցանիշներ		Ցանքի նորման կգ/հ.									
		50	70	80	90	100	110	120	130	150	160
Բույսերի քանակը մեկ քառ. մետրի վրա (օգտագործման առաջին տարին)		104	143	166	162	2[illegible]7	251	297	326	386	417
Մոլախոտերի քանակը մեկ քառ. մետրի վրա		64	52	47	23	21	16	3	—	—	—
Խոտի բերքը	Օգտագործման 1 տարին ց/հ	20,5	32,6	36,8	47,3	46,7	52,3	55,6	58,9	67,8	62,9
	Օգտագործման 2-րդ տարին ց/հ	31,2	36,3	44,5	58,6	64,1	73,1	76,4	80,6	89,1	73,7
	Ընդամենը ց/հ	51,7	68,9	81,3	105,9	110,8	125,4	132,0	139,5	156,9	136,6
Չոր խոտի մեջ տերևների և ծաղկաբույլերի քաշը տոկոսներով		36,5	39,1	43,5	49,1	50,1	50,1	49,8	50,1	50,2	50,9
Վարելաշերտում կուտակված չոր նյութի քանակը ց/հ	Օգտագործման 1 տարին	13,20	17,37	20,10	27,35	39,3	41,7	48,3	51,9	54,5	52,7
	Օգտագործման 2-րդ տարին	34,72	39,57	42,27	46,81	61,47	68,84	76,85	82,06	89,72	79,3
Հաջորդ կուլտուրայի (գարն. ցորենի) բերքը ց/հ		6,2	8,4	11,6	11,6	12,7	13,3	14,2	16,4	19,7	15,3

Ցանքի խտությունը մեծ չափով ազդում է խոտի բերքի վրա. որքան բարձր է ցանքի նորման, այնքան բերքն ավելի բարձր է։

Խոտի բերքի և ցանված սերմերի քանակի միջև կա ուղղակի կապ։ Խիտ խոտադաշտում կորնգանի ցողունները լինում են համեմատաբար բարակ, հետևապես թաղանթանյութ քիչ են պարունակում, տերևների և ծաղկաբույլերի քաշը միասին կազմում է խոտի ընդհանուր քաշի մոտ 50 տոկոսը։ Հետևապես, ոչ միայն շատ խոտ է ստացվում, այլ դրա հետ միասին խոտի որակն էլ է բարձր լինում։

Ֆանտանի պայմաններում դրված մեր փորձերից պարզվեց, որ նոսր խոտածածկոցի պայմաններում հողի մակերեսի հիմնական մասը ամռան ամիսներին բաց արևի տակ է գտնվում, մինչդեռ խիտ խոտածածկոցի տակ հողի մակերեսն այդ ամիսներին ամբողջությամբ գտնվում է ստվերի տակ։ Պարզվեց նաև, որ որքան խոտածածկոցը խիտ է, այնքան էլ հողի մակերեսի ջերմությունը ցածր է։

Աղյուսակում բերված թվերից կարելի է գալ նաև այն եզրակացության, որ որքան ծածկոցը խիտ է, այնքան հողը քիչ է ենթարկվում արևի կիզիչ ճառագայթների և քամիների ազդեցության, հետևապես ավելի պակաս ջուր է գոլորշիանում հողի մակերեսից։

Աղյուսակի տվյալներից պարզվում է նաև այն, որ որքան խոտածածկոցը հզոր է ու խիտ, այնքան հողում ջրի քանակը մեծ է։ Այդ տարբերությունը որոշ վարիանտներում հասնում է մինչև 3—4 տոկոսի։ Դա բացատրվում է նրանով, որ հողի մակերեսից ջրի գոլորշիացումը խիտ խոտածածկոցի դեպքում ավելի թույլ չափով է տեղի ունենում։

Գրականությունից հայտնի է, որ լուծույթից ջրի գոլորշիացումն այնքան ավելի դանդաղ է կատարվում, որքան ավելի մեծ է այդ լուծույթի խտությունը։ Ս. Մ. Մովսիսյանը նշում է, որ «Հողի լուծույթի կոնցենտրացիայի կամ օսմոտիկ ճնշման բարձրացումը, որը տեղի է ունենում հանքային լուծվող աղերի (պարարտանյութերի) ազդեցության տակ, կամ այլ պատճառով, դանդաղեցնում է հողի ազատ մակերեսից ջրի գոլորշիացումը»։

Պարզ է, որ խիտ խոտածածկոց ունեցող խոտադաշտի վարելաշերտի 0—5 սմ շերտում օրգանական մասսայի առատ առկայության պայմաններում չոր նյութերի տարրալուծման հետևանքով ստացված աղերը նույնպես բարձրացնում են հողի լուծույթի կոնցենտրացիան, որի պատճառով էլ դանդաղում է այդ պայմաններում ջրի գոլորշիացումը։

Վարելաշերտում կուտակված օրգանական մասսայի քանակը որոշել ենք յուրաքանչյուր վարիանտից 10 կրկնողությամբ վերցրած հողի նմուշներում։ Այդ նմուշները լվացել ենք 1 մմ ցանցի վրա և օդային չորության հասցնելուց հետո կշռել։ Ստացվել են հետևյալ տվյալները.

Ցանքի տարբեր նորմաների ազդեցությունը հողում կուտակված օրգանական նյութի քանակի վրա

				1 տարի	2 տարի
50	կգ/հ.	դեպքում	կուտակվել է	13,20 գ	34,72 գ
70	»	»	»	17,37 գ	39,57 գ
80	»	»	»	20,10 գ	42,27 գ
90	»	»	»	27,35 գ	46,81 գ

				1 տարի	2 տարի
100	կգ/հ.	դեպքում	կուտակվել է	30,30 գ	61,47 գ
110	»	»	»	41,70 գ	68,84 գ
120	»	»	»	46,3 գ	76,85 գ
130	»	»	»	51,9 գ	82,06 գ
150	»	»	»	54,5 գ	89,72 գ
160	»	»	»	52,7 գ	79,3 գ

Թվերը ապացուցում են, որ ցանքը տարբեր խտությամբ կատարելիս վարելաշերտում կուտակված չոր նյութերի քանակը տարբեր է լինում։ Որքան ցանքի նորման մեծ է, այնքան էլ բարձր է վարելաշերտում կուտակված չոր նյութերի քանակը։ Հետաքրքրական է, որ 120—150 կգ/հ նորմայի դեպքում կորնգանի խոտադաշտում օգտագործման առաջին տարին կուտակվում է ավելի շատ չոր մասսա, քան 90 կգ/հ նորմայի դեպքում 2 տարվա ընթացքում։

Այժմ, երբ այս կամ այն մասսիվներում առաջատար կուլտուրայի (ցորենի) տարածությունն ընդարձակելու նպատակով մենք պետք է կորնգանի խոտադաշտն օգտագործենք միայն մեկ տարի, այստեղից դժվար չէ տեսնել, որ բարձր խտությամբ ցանք կատարելու դեպքում մեկ տարի օգտագործվող խոտադաշտում հաջորդ կուլտուրայի բերքատվությունը ավելի բարձր կլինի, քան այն դեպքում, որտեղ ցանքի խտությունը եղել է 90 կգ/հ, բայց օգտագործվել է 2 տարի։

Վերջապես թվերը համոզում են, որ որքան խոտի բերքատվությունը բարձր է, այնքան էլ վարելաշերտում կուտակված չոր նյութերի քանակը նույնպես բարձր է։

Այսպիսով, մեր փորձերի որոշ վարիանտներում ստեղծվել են պայմաններ, որտեղ վարելաշերտում օրգանական նյութերի առաջացման ու կուտակման պրոցեսները ավելի ուժեղ չափով են ընթանում և հակառակը, այդ նույն պայմանները նպաստավոր չեն, որպեսզի օրգանական նյութերը արագ կերպով տարրալուծվեն և քայքայվեն։

Ֆանտանում և նույնանման չոր պայմաններ ունեցող այլ վայրերում հողառաջացման պրոցեսի ընթացքը փոխելու համար անհրաժեշտ է կիրառվող ցանքաշրջանառության խոտադաշտում ստեղծել հզոր ու խիտ խոտածածկոց, որը տեղի է ունենում ցանքը բարձր նորմաներով կատարելու դեպքում։

Մեր փորձերը համոզում են, որ միայն նման խիտ խոտածածկոցի պայմաններում հնարավոր է չոր նախալեռնային ու լեռնային շրջաններում համեմատաբար ավելի կարճ ժամկետում հողում ավելացնել հումուսի քանակը, ստեղծել կայուն կնձկային ստրուկտուրա և ստանալ բարձր որակի ու մեծ քանակությամբ խոտ։

Բազմահար կորնգանների խոտադաշտում խիտ խոտածածկոց ստեղծելով միաժամանակ բարձրացնում ենք հողի բերրիությունը, որը երևում է աղյուսակի թվերից։

Այն վայրերում (Թալին, Ախտա, Կոտայք, Նոր Բայազետ), որտեղ փորձված կոլխոզնիկները կորնգանի ցանքը կատարում են բարձր նորմաներով, ստանում են ոչ միայն խոտի բարձր բերք, այլև դրանով բարձրացնում են հաջորդ կուլտուրայի բերքատվությունը։

А. А. МАТЕВОСЯН

ВЫСОКИЕ НОРМЫ ВЫСЕВА СЕМЯН ЭСПАРЦЕТА КАК НЕОБХОДИМОЕ УСЛОВИЕ ПОВЫШЕНИЯ ПЛОДОРОДИЯ ПОЧВЫ

Резюме

В предгорных и сухих горных условиях Армянской ССР в пахотном слое почвы органические вещества разлагаются быстро. Нашими исследованиями установлено, что интенсивность накопления и разложения органических веществ в почве травяного поля в сильной степени зависит от густоты травостоя.

При принятой норме высева эспарцета в 60—70 и даже 100 кг/га получается редкий посев. Для получения 3,5—4 миллионов растений эспарцета на га требуется повысить норму высева до 140—150 кг/га.

В условиях колхоза им. Арутюняна Г. А. села Фонтан, Ахтинского района, при норме высева эспарцета в 140—150 кг/га, образуется густой травостой, урожайность сена повышается на 35—40%, количество сухих веществ, накопленных в почве—на 45—50%, и урожайность последующей культуры (яровая пшеница) повышается на 45—55%.

Наши опыты говорят о том, что в сухих предгорных и горных районах Армянской ССР, накопление гумуса в почве, создание прочной комковатой структуры, а также получение большого урожая высококачественного сена в значительно укороченные сроки возможно лишь в условиях густого травостоя с применением всего комплекса агротехнических мероприятий.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
АРМЯНСКИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ИНСТИТУТ
Գիտ. աշխատութ. ժողովածու № 7, 1952 Сборник научных трудов

Е. М. МОВСИСЯН

КОМБИНИРОВАННЫЕ УДОБРЕНИЯ ТИПА „АЗОФОС" ИЗ ЦИАНАМИДА КАЛЬЦИЯ И ФОСФОРНОЙ КИСЛОТЫ

(Сообщение II)

В первом сообщении* дана постановка вопроса о приготовлении комбинированных и сложных удобрений типа „азофос" из цианамида кальция и фосфорной кислоты, дана также химическая характеристика приготовленных азофосов.

Во втором сообщении даются результаты испытания азофосов, как сложных удобрений, в условиях вегетационного опыта.

Опыты были заложены в сосудах 20×20 см с ячменем Nutans на тяжело-глинистой, бедной гумусом, бурой почве. Повторность опыта 3-кратная, число растений—20.

Действие азота азофосов сравнивалось с действием стандартного удобрения—сернокислого аммония. Для сравнения был взят и цианамид кальция, в количестве, равном содержанию его в испытуемом азофосе. В ряде сосудов к азофосам, с меньшим содержанием азота по сравнению с фосфорной кислотой, добавлен азот в виде сернокислого аммония с доведением количества азота до количества фосфора, причем эта прибавка сделана в одном случае при изготовлении азофосов (IV, VI варианты), а в другом случае—при набивке сосудов почвой (I, III и V варианты).

Действие фосфорной кислоты азофосов сравнивалось с действием фосфора суперфосфата-монокальци-фосфата, т. е. наилучшего фосфорнокислого удобрения, несмотря на то, что в азофосах мы имеем фосфор в форме ди—и даже трикальцифосфата.

Норма удобрения: по 1,0 г P_2O_5 на сосуд; количество же азота было разное (см. табл. 1).

Для получения более наглядного представления о действии азофосов и для сравнения его с действием стандартного удобрения, рядом с каждым сосудом с азофосом стоял сосуд с эквивалентным количеством питательных веществ в виде стандартного удобрения. Сокращенная схема опытов с азофосами и полученные данные помещены в таблице 1.

Так как в азофосах I, III и V вариантов количество азота меньше, чем фосфорной кислоты, то при их применении в земледе-

* Сборник научных трудов № 6 Армянского сельскохозяйственного института, 1950, Ереван.

Таблица 1

Сравнительное действие азофосов и стандартных удобрений

Схема опыта	На сосуд в г		Общая масса		Зерно	
	N	P_2O_5	г/сосуд	%%	г/сосуд	%%
Без удобрения	—	—	24,3	100,0	10,1	100,0
Азофос I	0,49	1,00	26,1	107,4	9,7	96,0
Эквивалент станд. удобр.	0,49	1,00	38,3	157,6	13,6	134,6
Азофос III	0,221	1,00	32,1	132,1	13,6	134,6
Эквивал. станд. удобр.	0,221	1,00	34,3	141,1	14,3	141,6
Азофос IV	1,00	1,00	51,5	211,9	18,6	184,1
Эквивал. станд. удобр.	1,00	1,00	54,5	224,3	17,1	169,3
Азофос V	0,113	1,00	30,8	126,7	12,8	126,7
Эквивал. станд. удобр.	0,113	1,00	29,2	120,1	12,5	123,7
Азофос VI	1,00	1,00	53,0	218,1	17,2	170,3
Эквивал. станд. удобр.	1,00	1,00	54,7	225,1	16,1	159,4

лии часто потребуется добавочно вносить азотное удобрение, хотя бы до доведения нормы азота до нормы фосфора. Значение такой прибавки показано в таблице 2.

Таблица 2

Значение прибавки к азофосам азота

Схема опыта	На сосуд в г		Общая масса		Зерно	
	N	P_2O_5	г/сосуд	%%	г/сосуд	%%
Суперфосфат + N_A	1,00	1,00	54,7	100,0	16,1	100,0
Азофос I + N_A	1,00	1,00	39,9	72,9	13,6	84,5
Азофос III + N_A	1,00	1,00	51,5	94,1	17,1	106,2
Азофос V + N_A	1,00	1,00	55,3	101,1	17,8	110,5
Азофос IV	1,00	1,00	51,5	94,1	18,6	115,5
Азофос VI	1,00	1,00	53,0	96,9	17,2	106,8

Особенный интерес представляет состояние растений в сосудах, получивших азофос I. Верхушки листьев этих растений почти с начала вегетации побурели и постепенно высохли. С половины же вегетационного периода новые листья остались живыми и к концу растения дали небольшой урожай. Такое же явление, но в значительно меньшей степени, было обнаружено и у растений, получивших азофос III. Эти растения быстро поправились и в конце концов дали примерно такой же урожай, что и растения, получившие стандартное удобрение.

Такое угнетенное состояние растений можно объяснить тем, как сказано в первом сообщении, что в первом щелочном варианте азофоса часть азота цианамида переведена в дициандинамидную форму. Аналогичное явление неоднократно было обнаружено в отношении томатов, зерновых культур и табака в наших старых опытах с испорченным цианамидом и дициандиамидом, испытанным в качестве азотных удобрений.

Как видно из таблиц, азофос I в чистом виде снизил урожай даже по сравнению с контрольным сосудом; при прибавке к нему азота в виде сернокислого аммония растения все же значительно отставали по росту и по урожайности по сравнению с другими вариантами азофосов. Это говорит о том, что от первого варианта азофоса, как удобрения, нужно воздержаться.




Рис. 1.

Азофос III, в чистом виде его применения, по своему действию немного уступает стандартным удобрениям.

При прибавлении азота наблюдается даже тенденция к большему действию. Азофосы IV, V и VI действовали на развитие и урожайность растений лучше, чем эквивалентные им количества стандартных удобрений.

Но исходя из того, что азофосы I и III за короткий промежуток времени пребывания в почве изменяются и становятся полезными удобрениями, можно думать, что при заблаговременном их внесении в почву до посева они могут служить неплохими удобрениями.

Во второй таблице показывается одинаково ли действует при-

бавка азота при приготовлении азофосов или в момент внесения их в почву. Данные показывают, что этот вопрос не имеет существенного значения для эффективности удобрений, т. к. азофосы IV и VI, которые фактически являются соответственно азофосами III и V, к которым добавлен азот при изготовлении, дают вместе с азофосами III и V одинаково больше урожая зерна, чем смесь суперфосфата и сернокислого аммония, внесенная при набивке сосудов почвой. Но это одновременно показывает, что азофосы III и V являются хорошими компонентами в удобрении, повышающими эффект одностороннего азотистого удобрения. Исходя из этого и учитывая ряд других моментов, становится целесообразным прибавление азота в момент изготовления азофосов.




Рис. 2.

Для лугов и пастбищ горных районов Армении, а равно и для удобрения бобовых растений, повышенный интерес представляют III и V варианты азофоса. Небольшое содержание в них азота (5—7%) и большее содержание фосфорной кислоты (33—45%) делает их лучшими удобрениями для указанных культур, ибо последние особенно нуждаются в фосфоре.

Умеренное же содержание азота способствует первоначальному росту и развитию растений.

Богатое содержание питательных веществ в указанных удобрениях (40—50%) говорит в пользу их, т. к. при применении таких удобрений сокращается нагрузка транспорта в горных бездорожных районах примерно в три раза.

Одним из важнейших свойств азофосов является то, что их можно получить в виде гранул любой величины, с произвольным соотношением в них азота и фосфора. Азофосы обладают всеми положительными свойствами, присущими гранулированным удобрениям.

ЛИТЕРАТУРА

1. *Прянишников Д. Н.*—Агрохимия, Сельхозгиз, 1940 г.
2. *Соколов А. В.*—О сложных многосторонних удобрениях. Журн. „Удобрение и урожай", 7, 1931 г.
3. *Соколов А. В.*—Распределение питательных веществ в почве и урожай растений. АН СССР, 1947 г.
4. *Соколов А. В.* и др.—„Вегетационный метод", Сельхозгиз, 1938 г.
5. *Дубовицкий А. М.* и *Шерешевский А. И.*—Технология минеральных удобрений. Госхимиздат, 1947 г.
6. *Грачев Д. Г.*—Смешанные удобрения, Сельхозгиз, 1949 г.
7. *Унанянц Т. П.*—Минеральные удобрения. Госхимиздат, 1949 г.
8. *Пестов Н. Е.*—К развитию в СССР промышленности сложных удобрений. Журн. „Удобрение и урожай", 11—12, 1931 г.
9. *Баранов П. А.*—О смешивании удобрений. Журн. „Хим. соц. земледелия", 3, 1935 г.
10. *Смирнав Н. Д.*—Тукосмеси. Журн. „Советский хлопок", 5, 1937 г.
11. Справочник по удобрениям. Госхимиздат, 1933 г.
12. *Давтян Г. С.*—Фосфорный режим почв Армении. АН Арм. ССР, 1946 г.
13. *Давтян Г. С.* и *Мовсисян Е. М*—Успехи и перспективы развития агрохимической науки в Армянской ССР. Известия АН Арм. ССР, т. IV, № 3, 1951 г.
14. *Мовсисян Е. М.*—Комбинированные удобрения типа „азофос" из цианамида кальция и фосфорной кислоты, Сборник научных трудов СХИ Арм. ССР, № 6, 1950 г.

Ե. Մ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

«ԱԶՈՖՈՍ» ՏԻՊԻ ԿՈՄԲԻՆԱՑՎԱԾ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ՝ ԿԱԼՑԻՈՒՄ ՑԻԱՆԱՄԻԴԻՑ ԵՎ ՖՈՍՖՈՐԱԿԱՆ ԹԹՎԻՑ

Ամփոփում

(Հաղորդում 2-րդ)

Նախորդ հաղորդման մեջ մեր կողմից առաջարկվել է պատրաստել ազոֆոս տիպի կոմբինացված պարարտանյութեր ցիանամիդից և ֆոսֆորական թթվից, ինչպես նաև տրված է այդ ազոֆոսների ֆիզիկական և քիմիական հատկությունների բնութագիրը: Սույն հոդվածում խոսվում է ազոֆոսների ազդեցության մասին գյուղատնտեսական բույսի աճի, զարգացման և բերքատվության վրա՝ վեգետացիոն փորձի պայմաններում:

Փորձերը դրվել են Nutans *գարու հետ, ծանր կավային, հումուսից աղքատ, ուժեղ կարբոնատային գորշ հողում: Փորձարկվող ազոֆոսի յուրաքանչյուր անոթի կողքին դրվել է ուրիշ անոթ՝ ազոֆոսին էկվիվալենտ*

ստանդարտ պարարտանյութով: Ազոֆոսների ազոտի ազդեցությունը համեմատության է դրվել ամոնիում սուլֆատի հետ, իսկ ֆոսֆորական թթվի ազդեցությունը՝ սուպերֆոսֆատի հետ. Տվյալները մեջ են բերված հատուկ աղյուսակով:

Փորձից ստացված տվյալները ցույց են տալիս, որ ազոֆոսի I վարիանտը բույսի աճի վրա բացասաբար է ազդում. Թեև վեգետացիայի կեսերից վերանում է այդ ազդեցությունը, բայց արդյունքն այն է եղել, որ ի վերջո պակաս բերք է ստացվել: Ազոֆոս I-ի այդ ազդեցությունը հետևանք է այն բանի, որ նրանում ցիանամիդային ազոտի որոշ մասը վերածվել է դիցիանդիամիդի, որի թունավոր ազդեցությունն առհասարակ հայտնի է: Հետևաբար ազոֆոսի այդ վարիանտը իբրև ոչ հեռանկարային պարարտանյութ, ուշադրության չի կարող արժանանալ:

Ազոֆոս 3-րդն իր ազդեցությամբ գրեթե հավասարվում է ստանդարտ պարարտանյութերի ազդեցությանը, իսկ մյուս վարիանտները (4-րդ, 5-րդ և 6-րդ) ավելի լավ են ազդում բերքի վրա, քան ստանդարտ պարարտանյութերը:

Ազոֆոսի 3-րդ և 5-րդ վարիանտներին լրացուցիչ ազոտական պարարտանյութ ավելացնելիս նրանք իրենց ազդեցությամբ հավասարվում են 4-րդ և 6-րդ վարիանտներին և նկատելի չափով գերակշռում են սուպերֆոսֆատի և ամոնիումսուլֆատի խառնուրդին: (Աղյուսակ № 2):

Ազոֆոսի 3-րդ և 5-րդ վարիանտները լավ պարարտանյութեր կարող են դառնալ լեռնային շրջաններում մարգագետինների և արոտավայրերի համար, ինչպես նաև խոտախառնուրդների պարարտացման համար:

Սննդանյութերի մեծ պարունակության (40—50%) և քլորի փոքրության շնորհիվ ազոֆոսները լավ պարարտանյութեր կարող են լինել լեռնային շրջանների համար, որովհետև նրանց կիրառումով խիստ չափով կկրճատվի պարարտանյութերի տրանսպորտը և կոլխոզնիկների աշխատանքը:

Ազոֆոսների ուշադրության արժանի հատկությունն է նաև այն, որ նրանք ստացվում են գրանուլացված վիճակում, որով և օժտված են գրանուլացված պարարտանյութերի բոլոր դրական հատկություններով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
АРМЯНСКИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ИНСТИТУТ
Գիտ. աշխատութ. ժողովածու № 7, 1952 Сборник научных трудов

Ա. Ն. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԽՆՁՈՐԵՆՈՒ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՐՏԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պտղաբուծության պատմությունը Հայաստանում սկսվում է դեռ շատ հին ժամանակներից: Կան բազմաթիվ տվյալներ, որոնք հաստատում են, որ պտղաբուծությամբ Հայաստանում զբաղվել են դեռ ուրարտացիների և խալդերի ժամանակներից: Ավելի ուշ՝ միջին դարերում պտղաբուծության զարգացման մասին խոսում են Հայաստանում տարբեր ժամանակներում (7-րդից մինչև 12-րդ դար) կառուցված հուշարձանները: Զվարթնոցի, Գեղարդի, Ջանդեզուրի վանքերի պատերի վրա քանդակագործված են եղել նռնենու, խաղողի և զանազան այլ պտուղների նկարներ, որոնք հանդիսացել են այն ժամանակվա ճարտարապետության սիմվոլը: Չնայած պտղաբուծության դարավոր պատմությանը, այնուամենայնիվ գյուղատնտեսության այդ կարևոր ճյուղը չի ունեցել իր լայն զարգացումը, նա ընթացել է տարերայնորեն և գլխավորապես կենտրոնացած է եղել Արարատյան դաշտում, առանձին ֆեոդալների և վանքապատկան հողամասերում: Աշխատավորության լայն մասսաները զուրկ են եղել սննդամթերքների այդ կարևոր մասի օգտագործումից:

Մինչև 1920 թ. Հայաստանում պտղաբուծությունը բռնում էր ընդամենը մոտ 1500 հեկտար տարածություն, ըստ որում հիմնական կուլտուրաները՝ ծիրանենին, դեղձենին, քիչ քանակությամբ նաև սալորենին էին: Այնպիսի արժեքավոր կուլտուրաներ, ինչպիսին են խնձորենին և տանձենին, համարյա թե չեն մշակվել: Սովետական իշխանության հաստատումից հետո, Ստալինյան հնգամյակների ընթացքում պտղաբուծության բռնած տարածությունները գրավել են 15—16 անգամ ավելի տարածություն, քան նախասովետական Հայաստանում: Պտղաբուծությունը տարածվեց նաև լեռնային շրջաններում: Լեռնային շրջաններում պտղաբուծության հիմնական կուլտուրաներն են խնձորենին և տանձենին: Սակայն պետք է ասել, որ արդյունաբերական այգիների հիմնական սորտերի ներմը ընթանում է ի հաշիվ եվրոպական և միջին ռուսական սորտերի ներմուծման, որոնցից շատերը իրենց բիոլոգիական հատկանիշներով չեն համապատասխանում մեր երկրի հողակլիմայական պայմաններին, հատկապես մեր ամառվա երկարատև երաշտներին (օդի բարձր ջերմաստիճան, ցածր հարաբերական խոնավություն). դրա հետևանքով էլ նրանց աճն ու զարգացումն ընթանում են թույլ, ծառերը լինում են անառողջ, հաճախակի չորանում են, կամ եթե չեն էլ չորանում, ապա ենթակա են լինում հիվանդությունների ու վնասատուների, բերքը լինում է ցածր, անորակ: Ծառերը շուտ են ծերանում և շարքից դուրս գալիս: Մեր 1947, 48, 49 և 50 թթ. ուսումնասիրությունները Հայաստանի հարավ-արևելյան շրջաններում՝ Մեղրիում, Ղափանում և Սիսիանում ցույց են տալիս, որ միևնույն

հողակլիմայական պայմաններում տեղական սորտերի տարեկան աճը անհամեմատ ավելի ուժեղ է լինում, քան ներմուծված ամենալավագույն սորտերի աճը:

Տարեկան աճի վերաբերյալ կատարած մեր դիտողությունները մի շարք շրջաններում ամփոփված են № 1 աղյուսակում:

Աղյուսակ 1

Սորտերի տարեկան աճը

Դիտողության շրջանը, գյուղը	Սորտի անունը	Տարեկան աճը սմ 1947	1948	1949	1950	4 տարվա միջինը
Մեղրի, Լիճք . .	1. Ռենետ Սիմիրենկո	25	18	20	15	19,5
	2. Սովորական Անտոնովկա .	30	25	20	18	23,2
	3. Ձմեռային ոսկե պարմեն .	34	28	25	22	27,2
	4. Տեղական փայլիկ	50	45	48	40	45,7
	5. Շաքարախնձոր	64	58	64	55	60,2
Սիսիան, Դարաբաս	1. Ռենետ սիմիրենկո	30	26	25	20	25,2
	2. Սովորական Անտոնովկա .	34	25,5	28	25	28,7
	3. Ձմեռային ոսկե պարմեն .	32	28	28	26	28,5
	Տեղական սորտերից					
	4. Շահգալդի	68	65	66	60	64,7
	5. Կարմիր կենի	70	68,5	66	65	67,3
	5. Բլվենի	75	74	70	68	70,2
	7. Ղափար	69	70	68	64	67,2
	8. Իլդիզ	80	75	74	70	74,7
Ղափան, Ջեյվա . .	1. Ռենետ Սեմիրենկո	45	40	42	8	33,7
	2. Սովորական Անտոնովկա .	48	44	40	12	36
	3. Ձմեռային ոսկե պարմեն .	40	38	30	10	29,5
	Տեղական սորտ Ջեյվայախնձոր	85	78	80	35	69,5

Աղյուսակը ցույց է տալիս, որ տեղական սորտերի տարեկան աճը միևնույն ագրոտեխնիկայի պայմաններում ներմուծված ստանդարտ լավագույն սորտերի նկատմամբ 2—3 անգամ ավելի է:

Մեր կողմից կատարված ասիմիլյացիոն մակերեսի չափումների տվյալները ամփոփված են № 2 աղյուսակում:

Այս աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ պտղատու բույսերի ասիմիլյացիոն մակերեսը նախ և առաջ ուղիղ համեմատական է տարեկան աճմանը՝ որքան մեծ է տարեկան աճը և որքան շատ է տերևների քանակը, այնքան մեծ է ասիմիլյացիոն մակերեսը: Խնձորենու տեղական սորտերի ասիմիլյացիոն մակերեսը 1,5—2 անգամ ավելի մեծ է, քան ներմուծված սորտերինը: Դա ունի մեծ նշանակություն պտղատու բույսերի, մասնավորապես խնձորենու կուլտուրայի համար, քանի որ խնձորենու կուլտուրայի ասորտիմենտի գերիշխող մասը տալիս է պտղատվության

պարբերականություն: Ահա ասիմիլյացիոն մակերեսի այդպիսի մեծացման շնորհիվ, տեղական սորտերը ամեն տարի տալիս են փարթամ աճ և կայուն ու բարձր բերք այն ժամանակ, երբ ներմուծված սորտերը աճում են թույլ և մեկ տարի բարձր բերք են տալիս, մյուս տարին՝ ոչ: Առատ տերևակալումը նպաստում է ինչպես հաջորդ տարվա բերքի կազմակերպմանը, այնպես էլ ծառի ուժեղ զարգացմանը, նպաստում է նրանց ձմռադիմացկունությանը, երաշտադիմացկունությանը: Դրանով է բացատրվում նախ՝ վնասատուների և հիվանդությունների նկատմամբ կայուն լինելու այն մեծ ունակությունը, որով օժտված են մեր տեղական սորտերը:

Աղյուսակ 2

Ասիմիլյացիոն մակերեսն ըստ սորտերի

Դիտողության շրջանը, գյուղը	Սորտի անունը	1947 Տերևների քանակը	1947 Ասիմիլյացիոն մակերեսը քառ. սմ-ով	1948 Տերևների քանակը	1948 Ասիմիլյացիոն մակերեսը քառ. սմ-ով	1949 Տերևների քանակը	1949 Ասիմիլյացիոն մակերեսը քառ. սմ-ով	1950 Տերևների քանակը	1950 Ասիմիլյացիոն մակերեսը քառ. սմ-ով	Ասիմիլյացիոն մակերեսը 4 տարվա ընթ. քառ. սմ-ով
Մեղրի—Լիճք . .	1. Սովորական Անտոնովկա	14	560	15	600	14	570	13	500	2230
	2. Ռենետ Սիմերենկո	15	530	17	595	14	490	13	455	2070
	3. Ձմեռային ոսկե պարմեն	13	364	15	410	13	364	10	280	1418
	4. Տեղական փայլիկ .	24	960	24	960	22	880	23	920	3720
	5. Տեղական շաքարախնձոր	26	838	25	806	24	774	20	640	3058
Սիսիան—Դարաբաս	1. Սովորական Անտոնովկա	12	576	13	624	10	480	9	332	2022
	2. Ռենետ Սիմերենկո .	12	480	12	480	10	400	9	360	1720
	3. Ձմեռային ոսկե պարմեն	15	426	13	374	11	308	10	280	1388
	Տեղական սորտերը									
	1. Շահգալդի	30	1500	28	1400	30	1500	25	1250	5650
	2. Ղափար	28	1260	30	1350	27	1215	26	1190	5015
	5. Իլդիզ	20	1000	18	900	22	1100	17	860	3860
	4. Բլվենի	22	1050	20	960	20	960	18	880	3850
Ղափան—Ջեյվա .	1. Սովորական Անտոնովկա	16	800	16	800	14	700	10	500	2800
	2. Ձմեռային ոսկե պարմեն	14	560	15	600	13	520	10	400	2080
	3. Ջեյվայա խնձոր . .	18	900	20	2000	18	900	16	800	3600

Լեռնային շրջաններում խնձորենու կուլտուրայի զարգացման խոչընդոտ հանդիսացող ֆակտորներից մեկը գարնանային ցրտահարություններն են: Մեր դիտողությունները ցույց են տվել, որ տեղական սորտերը 8—10 օրով ավելի ուշ են ծաղկում, քան ներմուծված սորտերը:

Այս ուղղությամբ կատարված մեր 3 տարվա դիտողությունները ամփոփված են № 3 աղյուսակում:

Աղյուսակ 3

Ֆենոլոգիական դիտողությունների տվյալները և ծաղկման սկիզբն ըստ սորտերի

Դիտողության շրջանը, գյուղը	Սորտի անունները	1948		1949		1950	
		Ծաղկման սկիզբը	Ծաղկման վերջը	Ծաղկման սկիզբը	Ծաղկման վերջը	Ծաղկման սկիզբը	Ծաղկման վերջը
Սիսիան—Դարբաս	Բելֆլյոր դեղին	2/5	10/5	3/5	12/5	10/5	16/5
	Զմեռային ոսկե պարմեն	6/5	12/5	8/5	15/5	13/5	20/5
	Սովորական Անտոնովկա	4/5	12/5	8/5	15/5	12/5	19/5
	Տեղական սորտերից						
	Ղափար	12/5	20/5	15/5	24/5	18/5	25/5
